ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
(Պատմաքննական տեսություն)

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Ավարայրի ճակատամարտը հայոց պատմության առավել ցայտուն ուղենիշներից է: Քաղաքական աքցանի մեջ տոնված երբեմնի հզոր երկիրը՝ համախմբվելով երիտասարդ հավատքի շուրջ, բռնել էր վերածննդի ուղին, իսկ ախոյանը փորձում էր սրան հարվածելով անդառնալի կործանել ազգային ու քաղաքական զարթոնքը: Ուստի, հայ և դրացի ժողովուրդների հենքի վրա Ավարայրը վաղ միջնադարի առաջին ազատագրական պոռթկումներից էր: Այս արտակարգ իրադարձությունը, սկսած V դ., ստացել է գրավոր արձագանքներ: Անուն առ անուն հայտնի հայ նահատակները սրբացվել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու կողմից, իսկ Ավարայրի դաշտում տեղի ունեցածը ստացել է հանրահայտ ու անառարկելի ճշմարտության ուժ: Ավարայրի մասին մեր տեղեկությունները գերազանցապես հենվում են գրավոր սկզբնաղբյուրների վրա, ժամանակով բավական մոտ պատերազմական դեպքերին: Եղիշեն կարծես թե սրանց ականատեսը պիտի եղած լիներ[1], իսկ Ղազար Փարպեցին չվիվել էր մասնակիցների հետ[2]: Այս երկու անգնահատելի աղբյուրների հիման վրա էլ դարեր շարունակ հյուսվել է մի ծավալուն պատմագրություն, որ քայլ առ քայլ փորձել է մոտենալ հեռավոր V դ. դեպքերին: Վերաիմաստավորել այս նյութը յուրաքանչյուր սերնդի իրավունքն ու պարտքն է: Սակայն մեր օրերում դա հնարավոր է միայն Ավարայրի շուրջ ստեղծած փաստական տվյալների դասդասման, առողջ քննադատական մոտեցման դեպքում: Ավարայրը, նման մի քանի ազգային ֆենոմենների, միշտ իր վրա է գամել մարդկանց ուշադրությունը, անկախ նրանց մասնագիտական հետաքրքրություններից ու քաղաքացիական կողմնորոշումից, փոխարենը տալով բարոյական ու կամային դասեր: Գուցե սա է հիմնական պատճառը, որ 451-ի մայիսի վճռորոշ դեպքերի մասին տվյալներին յուրաքանչյուր սերունդ մեծագույն հարգանքով է մոտենում, համեմատության եզրեր որոնում այս ու հաջորդ պատմական շրջադարձերի միջև: Ուստի, տասնյակ սերունդների գոյությունն ու ինքնությունը զգալի չափով կանխորոշած Ավարայրը միանշանակ չէ նաև ուսումնասիրողների համար, լինելով թե՛ անցյալի արտացոլում և թե՛ ավանդություն դարձած ազգային չափանիշ: Սա պահանջում է Վարդանանց պատերազմի վերաբերյալ արտահայտվող ամեն մի նոր դատողություն անցկացնել փոխադարձաբար ու խնամքով

---

1 Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լույս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան (այսուհետև՝ Ե ղ ի շ ե). Երևան, 1957:

2 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան (այսուհետև՝ Փ ա ր պ ե ց ի). Տփղիս, 1904:

ստուգված փաստերի միջով, առանց շրջանցելու պատմագրական և աղբյուրագիտական բնույթի որևէ տվյալ:

Համաձայն հիմնական սկզբնաղբյուրների, հայոց և պարսից բանակների միջև պատերազմը տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ին Արտազ գավառում՝ Տղմուտ գետի ափերին տարածված Ավարայրի դաշտում: Եթե Եղիշեն ականատեսի մանրամասնությամբ է շարադրում դեպքերը, հուզական մթնոլորտն ու սրանց նախորդած և հաջորդած իրադարձությունները, ապա Փարպեցին ավելի հակիրճ է: Հայագետ Ե. Տեր-Մինասյանը կհամեմատեր երկու աշխարհամարտ տեսած մարդու տպավորությունների հետ. «Պատերազմի ժամանակ և նրանից քիչ ժամանակ անց՝ նրա բոլոր մանրամասնությունները, գրված թեկուզ և փոքր քաղաքների ու բերդերի անունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում և բերնեբերան են անցնում, իսկ երկար ժամանակ անցնելուց հետո՝ այդ մանրամասնություններն ու անունները աղոտանում ու մոռացվում են, և միայն ընդհանուր պատկերն է մնում»[3]:

Քանի որ սահմանափակված ենք բացառիկ նշանակություն ունեցող երկու գրավոր սկզբնաղբյուրներով, անգնահատելի են և՝ մանրամասները, և՝ ընդհանուր դրույթներով կառուցված դիտողությունները: Ոսկեդարի գործիչներից, այնուամենայնիվ, պահանջել գեղարվեստական հնարքներից ազատ, չոր ու սպառիչ զեկուցագիր պատերազմի փաստական կողմի մասին, անհնար է և տակավին խորթ հայ վաղմիջնադարյան աշխարհըմբռնմանը: Այնուամենայնիվ, շնորհիվ Եղիշեի հայտնի է, որ Ավարայրի դաշտ Վարդանանք դուրս էին բերել չորս զորագունդ[4]: Առաջին գունդը գլխավորում էր Արծրունյաց իշխան Ներշապուհը, նիզակակից ունենալով Մոկաց մեծ իշխանին և այլոց: Երկրորդ գունդն առաջնորդում էր Խորեն Խորխոռունին՝ Արսեն Ընծայինի և Ներսես Քաջբերունու օժանդակությամբ: Թաթուլ Վանանդեցին և նրա նիզակակից Տաճատ Գնթունին գլխավորում էին երրորդ զորագունդը, և շատ քաջ մարդիկ այս ու այն կողմից օգնում էին նրանց: Վարդան Մամիկոնյանն ինքը վերցրեց չորրորդ գունդը, և իրեն նիզակակից՝ քաջ Արշավիրին (Կամսարական նախարար Արշավիր Արշարունուն) և իր հարազատ եղբայր Համազասպին: Եղիշեն ավելացնում է, որ հայոց սպարապետը այսպես կարգավորեց ու ճակատ կազմեց՝ սփռելով դաշտի ամբողջ երեսին, արյաց զորքի դեմուդեմ, Տղմուտ գետի ափին: Մեր սկզբնաղբյուրը կարծես թե ոչինչ չի հայտնում թվարկած գնդերի փոխադարձ դիրքի, նրանց գրված թևերի մասին:

Ընդհակառակը, մեր մյուս հեղինակը՝ Ղազար Փարպեցին[5], մանրամասնում է, որ հայոց բանակը կազմված էր երեք թևերից և Համազասպ Մամիկոնյանին վստահված վերջապահ ուժերից: Ղազար Փարպեցին զորքի աջ թևում (Եղիշեի նշած երկրորդ զորագնդում)՝ նախորդ աղբյուրից հայտնի երկու հրամանատարների կողքին ավելացնում է Թաթուլ Վանանդեցուն, որն ի միջի այլոց Եղիշեի գործում գլխավորում էր հայոց երրորդ զորա-

3 Եղիշեի Վարդանանց պատմությունը. թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով Ե.Տեր-Մինասյանի (այսուհետև՝ Եղիշեի Վարդանանց պատմությունը). Երևան, 1946, էջ 33:

4 Ե ղ ի շ ե, V:

5 Փ ա ր պ ե ց ի, գրվագ Բ, գլ. ԼԸ:

գունդը (տե՛ս վերը): Սարև կտեսնենք, որ իրականությանն այս խնդրում ավելի մոտ է Եղիշեի տեղեկությունը: Կենտրոնում (Եղիշեի նշած առաջին զորագնդում)՝ Փարպեցին երկու հայանի հրամանատարների կողքին ավելացնում է մարդպետ Միհրշապուհին: Այսպիսով, Փարպեցու նկարագրած կենտրոնը և աջ թևը համապատասխանում են Եղիշեի տված առաջին և երկրորդ զորագնդերին: Ավելի բարդ է Փարպեցու նկարագրած ձախ թևի (տե՛ս վերը) նույնացումը Եղիշեից հայանի երրորդ կամ չորրորդ գնդի հետ: Սակ որպես վարկած առայժմ այն կարելի է նույնացնել Եղիշեի նկարագրած երրորդ գնդի հետ, իսկ Փարպեցու տված վերջապահ ուժերը՝ Եղիշեի չորրորդ գնդի հետ: Եվս մի անհամապատասխանություն վերաբերում է Եղիշեի չորրորդ գնդի երեք հրամանատարներից մեկի՝ Արշավիր Արշարունու գրված տեղին Փարպեցու գործում, այստեղ Արշավիրը կենտրոնում է՝ Արծրունյաց իշխանի, Մարդպետի և Արտակ Մոկաց իշխանի հետ[6]: Նախնական եզրակացությունը մեր երկու սկզբնաղբյուրների վերաբերյալ հետևյալն է. սրանք միմյանցից անկախ աղբյուրներ են՝ էլ ավելի հետաքրքիր իրենց անհամապատասխանություններով և համընկնումներով: Եվ դժվար է աներկբա ընդունել Բաբգեն Կյուլեսերյանի այն միտքը, թե Եղիշեն օգտվել է Ղազար Փարպեցուց և ժամանակակից չէ Ավարայրի դեպքերին[7]: Հենված երկու սկզբնաղբյուրների վրա՝ զորքերի տեղաբաշխումները պատմագրության մեջ ստացել են ընդունելի կամ կամայական պատկերներ: Հայ ժողովրդի պատմության դասագրքում նշվում է, որ «Վարդան Մամիկոնյանը հայկական բանակը բաժանում է չորս գնդի: Կենտրոնական գնդի հրամանատար է նշանակում Ներշապուհ Արծրունուն, աջ թևինը՝ Խորեն Խոռխոռունուն, ձախ թևը ինքն է վերցնում: Իսկ վերջապահ զորամասի հրամանատար է նշանակում իր եղբորը՝ Համազասպին: Յուրաքանչյուրի կողքին նշանակում է մի քանի օգնականներ»[8]: Ինչպես տեսնում ենք, հիմք է ընդունված Ղազար Փարպեցու հաղորդումը: Դասագիրքը լույս տեսնելուց մի տարի առաջ՝ Հայկական հանրագիտարանում, տրված էր սրանից մասամբ տարբերվող նկարագրություն: Վերջինիս համաձայն՝ հայոց բանակի բուն ուժերը բաղկացած էին կենտրոնից (Ն.Արծրունի), աջ (Խ.Խորխոռունի) և ձախ (Թաթուլ Վանանդեցի) թևերից ու սրանց օժանդակող պահեստային ուժերից՝ Կամսարական իշխանի և Համազասպ Մամիկոնյանի գլխավորությամբ[9]: Այս տեղաբաշխումն էլ չափավոր օգտվում է Փարպեցու և Եղիշեի տվյալներից: Սխեմայում (տե՛ս նկ. 1) բանակի աջ և ձախ թևերը եզերված՝ վերջապահ ուժերն էլ օժանդակված են հեծելազորով, ի տարբերություն կենտրոնի. նման վերականգնումը, մեր կարծիքով, չի հիմնավորված:

Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունում էլ, ըստ էության, տրված է հայագիտության մեջ ներկայումս ընդունված մի այլ խոսք Ավարայրում հայոց բանակի տեղաբաշխման վերաբերյալ: Այս

---

6 Փ ա ր պ ե գ ի. գրվագ Բ, գլուխ ԼԹ:

7 Բ. Կ յ ո ւ լ ե ս ե ր յ ա ն. Եղիշե. Քննական ուսումնասիրություն. Վիեննա, 1909: (Այստեղ և սարև բոլոր ընդգծումները մերն են):

8 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). Երևան, 1975, էջ 281:

9 Հ. Ա ղ ա բ ե կ յ ա ն. Ավարայրի ճակատամարտ 451.– Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ). հ. 1, Երևան, 1974, էջ 607, տես նույն էջում նաև սխեման:

հրատարակությունում Ս. Երեմյանն այն կարծիքին է, որ «Վարդան Մամիկոնյանը հայկական զորքը բաժանում է չորս մասի. աջ թևի զորամասի հրամանատարությունը հանձնում է Ներշապուհ Արծրունուն և նրան նիզակակից կարգում Մոկաց մեծ իշխան Արտակ Մոկացուն, ձախ թևի զորամասի հրամանատարությունը հանձնում է Խորեն Խոսրոովունուն և նիզակակիցներ կարգում Արսեն Ընծայացուն և Ներսեհ Քաջբերունուն: Երրորդ զորամասը Վարդան Մամիկոնյանը հանձնում է Թաթուլ Վանանդացուն և նրան նիզակակից կարգում Տաճատ Գնթունուն: Վարդան Մամիկոնյանը ինքը վերցնում է չորրորդ գունդը և իրեն նիզակակից նշանակում քաջ իշխան Արշավիր Կամսարականին ու իր հարազատ եղբայր Համազասպյանին»[10]: Այս մեջբերումը բավական հակասական ապավորություն է թողնում: Ս. Երեմյանը հրաժարվում է Ներշապուհ Արծրունու գնդին Ղազար Փարպեցու կողմից արված կենտրոնական զիրքից և ենթադրում, որ Եղիշեի նշած առաջին զորագունդը պիտի համապատասխաներ աջ թևին, իսկ երկրորդը (Խորխոռունու գլխավորությամբ՝ ձախ թևին. մի բան, որ հիմնավորել դժվար է: Նույն այս սրամարանությամբ՝ Եղիշեի նշած Թաթուլ Վանանդեցու և Տաճատ Գնթունու գունդը, թվով երրորդը, պիտի համապատասխաներ կենտրոնին: Սակայն հայագետը, գուցե կանխավ տեսնելով սխալը, խուսափում և չի շարունակում իր սկսած տեղայնացումը՝ երրորդ ու չորրորդ գնդերը սոսկ թվարկելով:

Զորքերի տեղաբաշխման խնդրի բերված լուծումները, և հատկապես ակադեմիական կարծիքը, ցույց են տալիս, որ հայագիտությունը տվյալ հարցում մոլորության մեջ է: Ոչ միայն Եղիշեն ու Փարպեցին (մեջբերած հատվածներում), այլև խնդրով զբաղված հայագետները բավականին մշուշոտ են պատկերացնում ռազմական արվեստի տարրերն ու անցած ուղին: Մինչդեռ ոա պատմությունը օբյեկտիվ լուսաբանելու չափազանց կարևոր մի բնագավառ է: Ինչպես կտեսնենք սասրև, նման անորոշություն է սիրում նաև Ավարայրին վերաբերող մյուս խնդիրներում:

Քննարկվող մյուս հարցը Ավարայրի ճակատամարտի տեղայնացումն է: Սրան մի ուշագրավ աշխատություն է նվիրել Հ. Աղաբեկյանը, ուր բերված է հայագիտության մեջ արտահայտված կարծիքների ողջ ընտրանին[11]: Հյուսիսից հարավ այն ունի հետևյալ աշխարհագրությունը: Ա. Աստուրյանը Տզմուտ գետը նույնացնում է Սարիսուի հետ և Ավարայրը տեղադրում Մակվից ոչ հեռու[12]: Սրանից մոտ 40 կմ արևելք է տեղադրված Ավարայրը 1960-ականների Հայաստանի պատմության պետական թանգարանի ցուցադրությունում՝ Այս լայնությունից մոտ 50 կմ հարավ՝ Թադևոս Առաքյալի վանքի մերձակայքում էր տեղադրում Ավարայրի դաշտը Ս. Երեմյանը, Տզմուտ գետն էլ նույնացնելով Մակուչայի հետ[13]: Այս հարցում անվանի հայագետը հարել է Ղևոնդ Ալիշանի[14] և Կ. Բասմաջյանի

---

10 ՀԺՊ, էջ 186:

11 Г. О. А г а б е к я н. К вопросу о месте Аварайрского сражения.— "Историко-филологический журнал", 1967, № 4, с. 91—114, схемы, с. 92 и 94.

12 Հ. Ա ս տ ո ւ ր յ ա ն. Պատմություն հայոց. Բուենոս-Այրես, 1947:

13 С. Т. Е р е м я н. Народно-освободительная борьба армян против персов в 450-451 гг.— "Вестник древней истории", 1951, № 4, с. 56.

14 Ղ և ո ն դ Ա լ ի շ ա ն. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 491:

պրպտումների արդյունքին[15]: Մխիթարյանների 1751 և 1849 թթ. հրատարակած քարտեզներում ևս տեղանքը ենթադրվում է Մակու դետի ավազանում. քարտեզներից երկրորդում Ավարայրը տեղայնացված է Մակվի վտակ Կզլար-չայի մոտ: Սրանից քիչ հարավ՝ Կարայենիի մերձակայքում է տեսնում Ավարայրը ակադ. Հ. Մանանդյանը. այստեղ հարևան երկու գյուղեր կոչված են Թեղնիա՝ համահունչ Տղմուտին, և նա կարծում էր, որ հարավից հյուսիս հոսող և Կզլար-չայը թափվող Կարաբուլաղ գետն էլ հնում կոչվել է Տղմուտ[16]: Ն. Ադոնցը և Լեոն Տղմուտ գետը նույացնում են հիշյալ Կարաբուլաղից և Թեղնիտներից 40–50կմ հարավ՝ Խոյից էլ հյուսիս հոսող Ակ-չայ գետի հետ[17]: Այս վայրին ժամանակին նախապատվություն են տվել երկրամասին քաջատեղյակ Գ. Շերմազանյանը և Կ. Կոստանյանցը, բայց այս ուսումնասիրողները ավելի մանրամասնած՝ մատնանշել են գետի ափին գտնվող Կարապիտլինի մերձակայքը[18]: Այս երկու անձանց տեսակետին է հարել նաև Ե. Տեր-Մինասյանը[19]: Տեղայնացման առաջարկված այս բոլոր տարբերակներն ամփոփելով, Հ. Ազաբեկյանն էլ կանգ է առնում Կարապիտլինի կարծիքին և խնդիրը դիտարկում ռազմավարական, աշխարհագրական և այլ տեսանկյուններից: Ի դեպ, հեղինակը, համաձայն իր հաղորդման, օգտվել է 1: 100 000, 1: 200 000, 1: 500 000 մասշտաբի ռազմական քարտեզներից: Անկասկած, Ավարայրի նույնացման խնդիրն ունի երկար պատմություն ու արժեքավոր արդյունքներ, սակայն մարտադաշտի տեղի որոնումները սրանով չի կարելի վերջնականապես ավարտված համարել, և խնդիրը, մեր կարծիքով, անհրաժեշտ է տեղափոխել հնագիտական հարթություն:

Ավարայրի վերաբերյալ երրորդ ծավալուն բնագավառը բուն ճակատամարտի ընթացքի վերականգնումն է: Սրան են ենթարկվում զորքերի գրաված տարածքը, զորամիավորումների տեսակները և զորքերի թիվը: Փաստական նյութի ուշադիր ուսումնասիրությամբ երբեմն կարելի է սրա ետևում տեսնել հակառակ ճամբարների հրամանատարների ընդհանուր ծրագրերն ու նպատակները, դրանց հասնելու համար, տվյալ պահին և վայրում, կիրառվելիք տեղանքի և մարդկային ուժի ընձեռած հնարավորությունները, այլ կերպ՝ ռազմավարությունը (ստրատեգիա) և մարտավարությունը (տակտիկա): Ուշագրավ է, որ զինված ուժերի բաշխվածության եղանակը դաշտում մատուցել կարող է ոչ միայն տարածական տվյալներ, այլև դրանց զարգացման հաջորդականությունն ու միտումները ժամանակի մեջ: Այս կտրվածքով ևս մեր հիմնական տեղեկությունները կարող ենք քաղել դեպքերին ամենամոտ երկու հիմնական աղբյուրներից:

Եղիշեն հաղորդում է, որ հայոց զորքերը «համախմբված հասան ... Արտազու դաշտը, և նրանց ընդհանուր թիվը եղավ վաթսունևվեց հազար

---

15 Կ. Բասմաջյան. Իսկական պատմություն հայոց. Կ.Պոլիս, 1914–1927, էջ 247:

16 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Tabula Peutingeriana-ի. Երևան, 1936, էջ 151-156:

17 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 316: Լ. Ե ո. Երկերի ժողովածու. հ. 1, Երևան, 1966, էջ 158:

18 Գալուստ Շիրմազանեան. Թէ ո՞ւր են Աւարայր եւ Տղմուտ.– «Արարատ», 1872, N 11-12, էջ 463–470: Կ. Կոստանյան ց. Հիւսուածք. գիրք 3-րդ, Վիեննա, 1877, էջ 119:

19 Եղիշեի Վարդանանց պատմությունը, էջ 300, դիտողություն 135:

մարդ ձիավոր և հետևակ»[20]: Ապա սպարապետը «տեղն ու տեղը դաշտում տեղավորում է զորքը և բոլոր կողմերից հետզհետե կարգավորում այրուձին»: Պարսից զորագլուխը սրանից մի քանի օր անց Հեր և Զարևանդ գավառում կանգ առնելով, «բանակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատերով փակեց, և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես քաղաք: Նրա զորքերից մեծաթիվ գունդ բաժանվեց, ասպատակելով արշավեց և կամենում էր բաղմաթիվ գավառներ կողոպտել:

Երբ այս բանը լսեց Հայոց զորքը ... ընտրեցին Ամատունյաց ցեղից մի սեպուհի Առանձար անունով: ...Սա երկու հազարով դուրս եկավ նրա դեմ, շարդեց-սատկեցրեց նրա գնդից շատերին, իսկ մնացածներին փախցրեց-հասցրեց նրանց բանակը»: Այնուհետև Եղիշեն ներկայացնում է Վարդանանց չորս գնդերը իրենց զորագլուխներով հանդերձ (տե՛ս վերը): Մեր պատմիչն այստեղ հաղորդում է նաև զորքի տարածական բաշխման մասին, նշելով, որ Վարդանը «կարգավորեց ու ճակատ կազմեց՝ սփռելով դաշտի ամբողջ երեսին, Արյաց զորքի դեմուդեմը, Տղմուտ գետի ափին»[21]:

Մեր մյուս պատմիչը՝ Ղազար Փարպեցին, այս դեպքերի մասին կատարում է հետևյալ հաղորդումը. «Մեծ զատկի տոնից մի քանի օր անց լսեցին, թե անհամար (պարսից – Հ. Հ.) զորք է եկել Հեր և Զարևանդ գավառները: ... Եվ սպարապետ Վարդանը ... Ամատունյաց տոհմից մի սեպուհի, որի անունն էր Առանձար, երեք հարյուրի չափ հեծյալներով ուղարկեց հետախուզելու Պարսից զորքերի բազմությունը: ... Եվ հարձակվելով վերջապահ հզոր մի թևի վրա, շատերին սրի անցկացրին, իսկ մյուսներին փախուստի մատնելով թափեցին Պարսից զորքերի մեջ: Իրենք էլ հասան Հայոց զորքերին: ... Պատմեցին, որ զորագլուխներն են Մուշկան Նյուսալավուրտը և Դողվճը: Սթափությամբ հասկացրին նաև, որ նրանք շուտով կարող են հասնել երկրի միջնաշխարհը: Որն էլ լսելով Հայոց երանելի սպարապետն ու նրա հետ գտնվողները՝ շտապեցին երթալ նրանց դեմ, ... մանավանդ, որ պարսից զորքին ոչ ոք չէր արգելում հասնելու Հայոց աշխարհը՝ սպանությամբ, գերեվարությամբ ու ավերածություններով..., սակայն առավել արագ շարժվում էր Պարսից զորքը, որ արդեն եկել-հասել էր Արտազ գավառը, Ավարայր կոչված գյուղի մոտ, Տղմուտ դաշտի շրջափակ տեղում, որն ընտրել էին Հայոց զորքի երկյուղից... և այնտեղ վրան զարկելով բանակեցին»[22]:

Այնուամենայնիվ, մի յոթ շաբաթ անց «Հայոց զորքերը եկան, հասան նույն տեղը և անպատրաստ գտան Պարսից զորքը. եթե ուզենային... կարող էին մեծ վնաս հասցնել, սակայն հետաձգելով մնացին այն օրը... բանակ դրին Պարսից զորքի մոտ»[23]:

«Եվ այսպես, սուրբ Վարդանի Հայոց զորքը, բաժանվեց երեք մասի... Աստծուն օրհնաբանելով շարժվեց առաջ...»[24]:

---

20 Ե ղ ի շ ե, V:

21 «Կարգէր և կազմէր զճակատն՝ Յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դեմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն» (Ե ղ ի շ ե, VI):

22 Փ ա ր պ ե գ ի, գրվագ Բ, գլ. ԼԷ:

23 Նույն տեղում, գլ. ԼԸ:

24 Նույն տեղում, գլ. ԼԹ:

Եղիշեի և Փարպեցու վերը բերած հատվածներից երևում է, որ հայոց զինված ուժերի հիմնական նպատակը պարսից ուժերը կանգնեցնելն էր՝ վերջ տալու համար խաղաղ բնակչության կողոպուտն ու սպանությունը: Աղբյուրները նաև միահամուռ հաղորդում են, որ պարսիկները բանակ զրին դաշտում, սահմանով ամրացված մի ճամբար: Փարպեցին, ի տարբերություն Եղիշեի, ավելի ժլատ է փաստերով կամ անտեղյակ հայոց զորքի տարածական բաշխմանը: Փարպեցին որևէ տվյալ չի հայտնում նաև այն մասին, թե որքան էր հայոց զորքի ընդհանուր թիվը:

Հայոց պատմության մեջ զորքի զինվածության մասին կրկին պատկերացումը բավական կամայական է: Վերը նշվեց Հ. Ազարեկյանի ներկայացրած՝ հետևակի և հեծելազորի տեղաբաշխման տարբերակը: Համալսարանական դասագրքում սրան ավելանում է հետևյալ պարբերությունը. «Վարդանի բանակը այնքան էլ լավ զինված չէր. շինականները վերցրել էին այն, ինչ ճարել էին: Զորքի մի մասը ձիավոր էր, մյուսը՝ հետևակ»[25]: Նշված փաստարկը, անշուշտ, աղբված է Եղիշեի հետևյալ տողերից. «Զորականներից ո՛րը ոչինչ չուներ (Վարդանը – Հ. Հ.), հոգում էր իր սեփականությունից և ընկերներից. ով զենք չուներ, զենք էր հայթայթում նրան, ում զգեստ էր պետք, զգեստ էր հագցնում, և ում ձի՝ ձի էր տալիս, և առատ պարենով ուրախացնում էր բոլորին»[26]: Իրականում, քրիստոնեական հավասարություն և եղբայրություն արտացոլող այս պարբերությունից ամենևին էլ չի հետևում, թե զորքն անկազմակերպ էր ու պատահական զինված, կազմված անփորձ շինականներից. ավելին, թե ում ինչ էր հարկավոր, եթե անդամ հավատ ընծայենք այս տողերին, կարգավորվում էր կենտրոնացած, կազմակերպված, շատ հեռու՝ կանոնավոր զորքի փոխարեն դասագրքում ներկայացրած թափորից:

Ուսումնասիրողներից, թերևս, Հ. Ազարեկյանն է, որ փորձել է Եղիշեի և Փարպեցու տեղեկությունները հաշտեցնել անտիկ և վաղմիջնադարյան ռազմարվեստի տեսությանը, տվյալ դեպքում Վեգետիոսի գրությներին: Նախ և առաջ, գիտնականն աներկբա ընդունում է, որ Ավարայրում հայոց զորքը 66 հազար էր: Այս տվյալն էլ նա համաձայնեցնում է Վեգետիոսի տեսությանը: Համաձայն անտիկ հեղինակի՝ «մի մղոն տարածության վրա (1480,00 մ) մի դծով պետք է կանգնած լինի 1666 հետևակային»[27]: Հ. Ազարեկյանն այս ելակետից դուրս է բերում. եթե Վարդան Մամիկոնյանի զորքը բաղկացած էր երեք գնդից և ռեզերվից, իսկ այս պահեստային գունդը պիտի որ կազմեր 66 հազարի մեկ երրորդից մինչև մեկ չորրորդը, ապա հայոց բանակը ճակատում կունենար 40 հազար զինվոր, կանգնած մի քանի հաջորդական շարքով. այն է՝ 10 շարքով, դրավելով 3.6 կմ ճակատ, կամ էլ 6 շարքով, լայնացած 6 կմ: Քանի որ զորամիավորումների միջև կար միջակայք, իսկ զորքում հետևակից բացի կար նաև ավելի ծավալուն միավոր՝ հեծելազոր, որը դրավում էր ավելի մեծ տարածք, հայոց բանակը կպահանջեր առնվազն 4 կմ ճակատ, իսկ ռեզերվն ու պահակա-

25 ՀԺՊ, 1975, էջ 280:
26 Ե ղ ի շ ե, V:
27 F l a v i u s V e g e t i u s R e n a t u s. Epitome rei militaris. Leipzig, 1885, III, 14:

զորն էլ ճակատից հեռացրած զորքի ճակասը կկազմեր առնվազն 2.5–3 կմ[28]: Ավելի պարզաբանելու համար Հ. Ազաբեկյանի հաշվարկն ըստ Վեզեսիոսի՝ ստորև առաջարկում ենք նույն ելակետից բխող երկու տեսական տարբերակ: Առաջին դեպքում ընդունենք, որ հայոց բանակը կանգնած էր գետի հյուսիսային ափին, մի գծի վրա և միայն մի շարքով (գործնականում սա, իհարկե, բացառված է, սակայն օպտակար է ընթերցողին լավ պատկերացնելու հեռագա հաշվարկները): Դիցուք վերցնում ենք հայոց «չորս» կորադեզերից մեկը՝ 60–66 հազարանոց բանակի մոտ մեկ չորրորդը, 12 հազարանոց հետևակ և 3 հազարանոց հեծելազոր: Այս դեպքում, եթե զինվորը զբաղում է 1.125 մ ճակատ, զորքը կզբաղեցներ 13 500մ ճակատ. եթե 100 հետևակայինը մեկ սահմանված էր ինտերվալ՝ ենթադրենք 20-ական մ, ապա 119 նման ինտերվալներ կտային ևս 2380մ կլորացված, 2400 մ: Ուստի ողջ հետևակը մի ընդհանուր գծի վրա՝ Տզմուսի ափով կձգվեր 2400 մ+13 500 մ =մոտ 16 կմ: Սակայն հետևակի թևերում կամ անգամ նրա հետ մեկընդմեջ կար նաև 3 հազարանոց հեծելազոր. եթե ընդունենք, որ հեծյալն իր ձիով զբաղվում էր մոտ 1.5 մ ճակատ, ապա 3 հազար հեծյալը կզբաղեցներ 4 ու կես կմ ճակատ: Հեծելազորի ճակատում եղած 500-ը մեկ ինտերվալներով (5 ինտերվալ x մոտ 20 մ=100 մ) կստացվի 4600 մ չափի հեծյալ ճակատ, որն էլ վերը նշված հետևակի հետ կկազմեր 16 կմ + 4.6 կմ = մոտ 20 կմ: Զմռուանանք, որ կար այսպիսի չորս դունդ:

Այժմ այս ուսումնական պատկերից անցնում ենք հավանականությանը շատ ավելի մոտ կանգնած ուժերի բաշխմանը: Ընդունում ենք, որ հայոց հետևակի և հեծելազորի մեկ չորրորդ մասը՝ հայոց դնդերից մեկը, Տզմուսա գետի ափին տարածված էր այնպես, որ 12 հազարանոց հետևակը կազմված էր 10 մեկը մյուսի հետևում կանգնած շարքից: Այս դեպքում կստացվեր մոտ 1500 մ ճակատ և 5 մ կամ ավելի խորություն: Սրան սժանդակող հեծելազորն էլ, եթե ենթադրենք, որ այն զբաղեցնելու էր ևս 10 շարք, 3000-անոց ուժերի պայմաններում կզբաղեր 450–500 մ ճակատ: Հայոց չորս դնդերից մեկն, այսպիսով, կզբաղեցներ 1800-ից 2000 մ ճակատ: Այժմ, եթե դիմենք հայալիտության մեջ ընդունելի սխեմաներից մեկին, համաձայն որի գետի ափին կանգնած էր Վարդանի չորս դնդերից երեքը (տե՛ս վերը), պիտի առնվազն եռապատկենք ստացած թիվը, ստանալով 6 կիլոմետրանոց ճակատ: Հ. Ազաբեկյանը այս կամ նման հաշվարկներից հանում է ռեզերվը, սաաարներին և այլն (ընդհանուրի 25–30%), ստանալով 3 կմ ճակատ, բայց սա էլ հնարավոր է գործնականում զորքի խորությունը կրկնապատկելու դեպքում:

Որքան էլ կոպիտ ու մոտավոր լինեն մեր պարզաբանումները՝ տված Հ. Ազաբեկյանի հաշվարկի վերաբերյալ, դրանք պարզ ցույց են տալիս, որ անգամ Կարապետադինի մոտ փռված 4 կմ լայնքով դաշտը որպես Ավարայր ընդունելու դեպքում վարկածը բախվում է լուրջ դժվարությունների: Նույնիսկ զանազան մանրամասներ անտեսելիս, պետք է հաշվի առնել, որ հայոց դնդերը երկու կողմից սեղմվում էին բլուրների միջև, գետի ափին,

28 Г. О. А г а б е к я н. Նշվ. աշխ., էջ 112–113:

իսկ պարսից ավելի մեծաթիվ բանակի համար էլ ավելի էր դժվարանում անցումը գետի հակառակ ափը (եթե դա, իհարկե, նախատեսվում էր):

Այժմ դիմենք սկզբնաղբյուրների ուված տեղեկությանը պարսից զորքերի բաշխման վերաբերյալ: Եղիշեն հաղորդում է, որ «Պարսից բանակի զորավարը... հրամայեց իր առաջ բերել փղերի երամակները. դունդ-դունդ բաժանեց այդ ղաղաններին և ամեն մի փղի մոտ երեք հազար սպառազեն մարդ դրեց, բացի մնացած ամբողջ զորքից: ... Կարգավորեց ամբողջ զորքը և ճակատը տարածեց-երկարացրեց մեծ դաշտի երկարությամբ: Ամեն մի ղաղանի աջ ու ձախ կողմը երեքական հազար սպառազեն պատրաստեց և ամենաընտիր քաջ զինվորականներին իր շուրջը ժողովեց. և այսպես Մասյան դունդն ամրացրեց ինչպես մի հզոր աշտարակ և կամ մի անմատչելի բերդ: Նշաններ բաշխեց, դրոշներ արձակեց և հրամայեց, որ մեծ փողի ձայնին պատրաստ լինեն: Իսկ... ուրիշ բազմաթիվ ընտիր-ընտիր զորականների մի տեղ ժողովեց (Ապարհացի, Կաշտաց, Հոնաց և Գեղաց դնդերի հետ միասին – Հ. Հ.) ... իր զորքի տջ կողմում ... ընդդեմ Հայոց զորավարի»[30]:

Փարպեցին հաղորդում է, որ Առանձարը և նրա հետ գնացած զորքն արժանացան այն բանին, «որ նրանք տեսնեն Պարսից բանակը: Եվ հարձակվելով վերջապահ հզոր մի թևի վրա, շատերին սրի անցկացրին, իսկ մյուսներին փախուստի մատնելով թափեցին պարսից զորքերի մեջ»[30]:

Պարսից զորքը հայերից ավելի վաղ բանակել էր «Տղմուտ դաշտի շրջափակ տեղում, որն ընտրել էր Հայոց զորքի երկյուղից... և այնտեղ վրան զարկելով բանակեցին»: Բայց սրանով հանդերձ, ուշադրավ է, որ «Հայոց զորքերը եկան, հասան նույն տեղը և անպատրաստ գտան Պարսից զորքը. եթե ուզենային, երամակարձակ այն ծուլերին կարող էին մեծ վնաս հասցնել, սակայն հետաձգելով մնացին այն օրը...»[31]:

Բերված տեղեկություններից երևում է, որ տվյալներ հաղորդող մեր աղբյուրները դոփում են տեղում, երբեմն միևնույն բանը նույնությամբ կամ ձևափոխված կրկնում, որ կարելի է բացատրել պատմիչների տրամադրության տակ եղած բավական սուղ փաստական նյութից: Այսպես, սկզբում, ինչպես կարելի է համոզվել վերն արած մեջբերումից, Եղիշեն փղերը դարձնում է պարսից դնդերի առանցքը, կենդանիներից յուրաքանչյուրի մոտ դնելով մեկական զորադունդ՝ 3 հազար սպառազեն մարդուց բաղկացած, բայց այս շատ թե քիչ հասկանալի պատկերը տրոհվում է, երբ մեր պատմիչը հաղորդում է, թե սա վերաբերում է միայն փղերով ամրացված զորքին, և սրանից բացի ակնարկում է մնացած ամբողջ զորքի մասին. «թող զայլ զօրսն ամենայն»: Չի բերվում ոչ մի թվական էական տվյալ պարսիկների կամ փղերի մասին: Երկու պարբերություն ստորև պատկերը փոխվում է: Այժմ ղաղաններից աջ ու ձախ բաշխված են 3 հազարական ամենաընտիր քաջ զինվորներ, այսինքն երկու անգամ ավելին, քան ասված էր վերը: Կարծես թե այս կառուցվածքն է տարածված ամբողջ դաշտի երկայնքով, որն էլ ընդհանրական կոչված է աշտարակի կամ բեր-

29 Ե ղ ի շ ե, VI:
30 Փ ա ր պ ե ց ի, գրվագ Բ, գլուխ ԼԷ:
31 Նույն տեղում, գլուխ ԼԸ:

դի պես ամրացված Մատյան գունդ: Սրանից զատ Եղիշեն ուշադրություն է հրավիրում պարսից աջ թևի վրա՝ հայոց ձախ թևի դիմաց, նշելով այստեղ կենտրոնացրած չորս գնդեր և էլի ընտիր-ընտիր զորականներ: Ինչպես երևում է, գունդ հասկացությունը տարբեր առիթներով օգտագործված է թե՛ ողջ բանակի և թե՛ առանձին խոշոր զորամիավորումների կամ դրանց մասերի վերաբերյալ:

Փարպեցին ոչ միայն տվյալներ չունի զորքերի դասավորության մասին Տղմուտ գետի հակառակ ափին, այլև նշում է բանակ դրած և անպատրաստ սասանյան զորքերի մասին, իսկ միակ թվական տվյալը, մինչև դլխավոր բախումը՝ վերաբերում է Առանձարի առաջապահ գնդին: Ահա այս հենքի վրա էլ պատմարանները կատարում են զորքի քանակական, տարածական հատկանիշների մասին գատողություններ:

Ոչ պակաս անմխիթարական է մեր աղբյուրներից քաղած ճակատամարտի ընթացքին վերաբերող տվյալների մեկնության վիճակը հայ պատմագրության կողմից: Սկզբում անդրադառնանք աղբյուրների տվյալներին:

Եղիշեն պատմում է, որ թշնամի երկու կողմերը «դանազան զորությամբ միմյանց վրա հարձակվեցին. երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էր, ինչպես իրար խառնված ամպերի միջից, իսկ ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու դրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր: Նաև բազմաթիվ սուսերների շողալուց ու բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից ... վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ճայթյունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները...

...ի՜նչ մեծ տագնապ ու անչափ իրարանցման սրտնեղություն կար երկու կողմերում էլ, երբ հանդուգն հարձակումով իրար էին բախվում. որովհետև թանձրամիտները հիմարանում էին, և վախկոտները վհատվում. քաջերը խիզախում էին, և անվեհեր կտրիճները աղաղակում: Եվ ամբողջ բազմությունը իրար գլխի խմբվելով՝ գետն ամեն կողմից փակեցին, և գետի դժվարությունից վախեցած, Պարսից զորքն սկսեց իր տեղում վխտալ: Իսկ Հայոց զորքն անցավ գետը, և ձի նստած մեծ զորությամբ հարձակվեց: Ուժգին թափով իրար զարկվելով՝ երկու կողմից էլ բազմաթիվ վիրավորներ գետին ընկած թպրտում էին:

...դեպի վեր նայեց քաջ Վարդանը և տեսավ, որ Պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները Հայոց զորքի ձախ կողմն ընկճեցին. նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և Պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների կողմը և շուրջը պտտելով կոտորեց մինչև նույն տեղը: ...մինչև անդամ Մատյան գնդի հաստատուն կազմակերպությունը քայքայվեցրիվ եկավ, և նա գևռևս պարտություն չկրած՝ փախուստ տվեց:

Ապա ... Նիսալավուրտը ... տեսավ, որ Հայոց զորքերից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում: Ուստի և աղաղակ բարձրացրեց, քաջալերեց իր շուրջը գտնված Արյաց զորքին, որոնք կանգնած էին Վարդանի գնդի հանդեպ: Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտված էին զգում...:

Երբ այս բանը տեսավ Մուշկան Նիսալավուրտը, սպասում էր Արտաշրի գաղաններին, որը նրանց վրա նստած էր բարձր դիտանոցում, ... և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերով շրջապատեց նրան:

Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, որ և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պսակը:

Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարաժամեց և երեկոյան դեմ դադարեց, ... ընկածների դիակներն այնպես խիտ էին ու իրար մոտ թափված, ինչպես անտառի կտրատված փայտը: ... ուստի և չէին կարողանում ստույգ որոշել երանելիների սուրբ մարմինները: ... Իսկ ովքեր /կենդանի/ էին մնացել, ցիրուցան եղան ամուր ձորերի լեռնադաշտերում. և ... դարձյալ սպանում էին մեկմեկու: Եվ այսպես դաժան գործը շարունակվեց մինչև արևի մայր մտնելը: ... ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին:

Բայց որովհետև Հայոց զորավարն ընկել էր ... ոչ ոք գլխավոր չկար մեջտեղում, որին հենված ժողովվեին մնացած զորքերը: ... ողջ մնացածները... ցանուցիր եղան և քաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով տիրեցին շատ գավառների ու բերդերի, որոնք ոչ ոք մինչև իսկ առնել չէր կարողանում»[32]:

Իրոք որ մեծ ուժով, խոշոր ու գունեղ վրձնահարվածներով կերտած ստեղծագործության կտորներ են բերված վերը. ընթերցողը չափերի, գույների, ձայների, տեղային (լոկալ) փոփոխությունների շնորհիվ, երկու զորավարների հրամանների կատարումը արտացոլող շարժումների միջոցով տեղափոխվում է պատերազմի դաշտ: Եղիշեի խոսող կտավի հոգեբանական ներգործությունը այնքան հզոր է, որ համոզիչ են թվում այն առարկայացնող դրեթե բոլոր փաստական կարգի տվյալները (տե՛ս մեր ընդգծումները): Սակայն Ոսկե դարի հայ գրականության այս գոհարը պատմական վերականգնումների առաջ հարուցում է լուրջ խնդիրներ. այլ կերպ ասած երբ հանվում է գեղարվեստական շղարշը, թողնելով մերկ փաստերը, զգացվում է օժանդակ տվյալների խիստ բացակայություն. պատմաբանները այն առ այսօր համալրել են ռազմարվեստի վերաբերյալ սեփական իմացություններով: Սա էլ Ավարայրի ճակատամարտի դեպքերը վերականգնելու փորձերի ամենասկզբունքային և, միևնույն ժամանակ, ամենախոցելի տեղն է: Մինչև անդրադառնալն այստեղ առկա թերություններին, ստորև դիմենք մարտական գործողությունները լուսաբանող մյուս կարևոր սկզբնաղբյուրին՝ Ղազար Փարպեցուն:

«Եվ այսպես, սուրբ Վարդանի Հայոց զորքը ... Աստծուն օրհնաբանելով շարժվեց առաջ: Իրար վրա հարձակվեցին երկու կողմերը՝ Հայոց և Պարսից: ... տղամարդիկ... սկզբում փախուստի մատնեցին պարսից զորքերին: Իսկ Հայոց զորքի այն բազմությունը, որ եկել էր հարկից դրդված և ակամա, մանավանդ ուրիշներին էլ... ետ դարձնելու համար, այնտեղից փախուստ տալով հավիտենական կորստով չքվեց:

32 Ե ղ ի շ ե, VI:

Պարսից զորքերն էլ, տեսնելով, որ Հայոց դունդը թուլացել, ուժասպառ է վարձել և չի կարող իրենց կոտորել, տեսնելով նաև, որ փախած գնում էր Հայոց զորքի մի մասը, շրջապատեցին բոլոր կողմերից, հորդեցին նրանց վրա: Այստեղ էլ ... նահատակվեցին նրանք: Այնուհետև պարսից զորքերն ընկան հայոց փախստականների ետևից: ...ոմանց կոտորեցին, ուրիշներին կալանավորելով ...փակեցին ամրոցում: Սրանցից ոմանք, գիշերը կորելով ... պաշտպանություն ..., հեռացան ողջանդամ: Առավոտյան հայ փախստականներից ում որ ձերբակալեցին, բերին բանակը և կոտորեցին սրով, շատերին փղերի ոտքերի տակ ձգելով սպանեցին: Մնացածները փախչելով Հայաստանի այլևայլ տեղերում ցրվեցին»[33]:

Ինչպես տեսնում ենք, Փարպեցին ոչինչ չի ասում հայոց զորքի կողմից Տզմուան անցնելու, պարսիկներին նեղելու, ապա Մատյան դունդը քայքայելու մասին: Սակայն մե՛կ պարսիկները են փախուստի դիմում, մե՛կ հայերը: Եթե Եղիշեի դործում Վարդանը թշնամական ափին է շրջափակվում և կնքում իր մահկանացուն, ապա Փարպեցին հայոց ուժերի շրջափակումը ներկայացնում է Տզմուտի հայկական ափին՝ համաձայն դեպքերի արամաբանության: Փարպեցու Պատմությունում երևան է գալիս նաև մի նոր դործոն, անհայտ՝ Եղիշեին, հայոց ուժերից անջատված այն՝ իբր թե պավաճան ուժերը, որոնք փախչում և իրենց ետևից տանում են յուրայիններին ու հետապնդող պարսիկներին: Այս համառոտ, բայց փաստերով հարուստ գույդ պարբերությունները կարող էին օդնել բացահայտելու շատ մանրամասներ, որ ակնարկվում են Եղիշեի Հայոց Պատերազմում: Մինչդեռ, տեսնենք, թե սկզբնաղբյուրների հիման վրա ինչպիսի վերականդնումների են ենթարկված Ավարայրի դեպքերը հայ պատմական մի շարք ուսումնասիրություններում:

Հայ ժողովրդի պատմության դասագրքում «...հարձակումը սկսում է հայկական զորքը, որն անցնում է Տզմուտ դետը և գրոհում թշնամու վրա: Վարդանն իր դլխավորը հարվածն է ուղղում մատյան (արքունական) դնդի վրա: ...պարսից դունդը սկզբում նահանջում է, ... բայց շուտով պարսկական զորքերը աջյանի մեջ են առնում Վ.Մամիկոնյանի զորամասը: Սկսվում է կատաղի կռիվ: ... Հայկական զորքերը, կորցնելով իրենց հրամանատարին, մութն ընկնելիս թողնում են պատերազմի դաշտը և նահանջում»[34]: Բերված այս տողերում չի պարզաբանվում, թե ինչու է հարձակումը սկսում հայկական զորքը, ինչու է անցնում դետի մյուս ափը, խրվում Մատյան դնդի մեջ, կամ ինչ պետք է հասկանալ Մատյան դնդի տակ տվյալ համատեքստում, կամ ինչպես է հայկական զորքը նահանջում: Ստեղծվում է ապավորություն, թե սկզբնաղբյուրների հաղորդումը առանց ծանրութեթև անելու, հեղինակները խնամքով փոխադրել են դասագրքի էջերը, գալիք ուսանողներին պարտադրելով սերտել այն, ինչ այնքան էլ հասկանալի չէ:

Նույն՝ 1970-ական թվականներին Հ. Աղարեկյանը Հայկական հանրագիտարանում ներկայացրեց հետևյալ մեկնությունը՝ պարզաբանված համապատասխան սխեմայով. «Ճակատամարտը սկսվում է նետաձդությամբ

33 Փ ա ր պ ե ց ի, գլուխ ԼԹ:
34 ՀԺՊ, 1975, էջ 281–282:

և փոխադարձ գրոհով: Հասնելով գետին պարսիկները կանգ են առնում, իսկ հայերը անցնում են այն և ամբողջ ճակատով մարտի բռնվում ... այրուձին խրվում է (հակառակորդի – Հ. Հ.) մարտակարգի մեջ: ...Թշնամու ... ձախ թևն ու կենտրոնը նահանջում են, մինչդեռ նրա աջ թևում (կռվողները – Հ. Հ.)... ընկճում են Թաթուլ Վանանդեցու զորամասին: Վարդան Մամիկոնյանը պահեստազորի մի մասը ... նետում է կենտրոն... մնացած մասով օգնության է շտապում ... ձախ թևին: Զարդացնելով գրոհը՝ Վ. Մամիկոնյանը շրջանցում է պարսիկների կենտրոնական զորամասերին, կռվի բռնվում նրանց պահեստազորի հետ և խուճապի մատնում նրան: Բայց... «Մատյան գունդը» և նահանջող աջ թևը, վերադասավորվելով շրջապատում են իրենց թիկունքը թափանցած հայկական հեծելագնդին: Անհավասար մարտում հերոսաբար զոհվում է նաև Վարդան Մամիկոնյանը: Ճակատամարտը շարունակվում է մինչև օրվա վերջը: Հայկական զորքերը, կատարելով իրենց մարտական առաջադրանքը, երեկոյան քաշվում են Տղմուտի ձախ ափը և նահանջում երկրի խորքը...»[35]:

Տեղեկությունը շարադրված է կուռեկտ ռազմական տերմիններով: Վերջասլես, երևում է, որ Մամիկոնյանը չէր գլխավորում ձախ թևը և դալիս էր նրան օգնության: Բայց չի պարզաբանված, թե ինչու պարսիկների գերակշիռ ուժերը հասնելով գետի ափին, կանգ են առնում, իսկ հայոց ավելի վոքրաթիվ բանակը համատարած անցնում է գետի մյուս ափը, ամբողջ ճակատով մարտի բռնվում և խրվելով պատրաստված ծուղակը, շրջափակվում, այն էլ քրեստոմատիկ եղանակով: Ռազմական, մասնավորապես տակտիկական (մարտավարական), տերմինների ետևում այս հոդվածում կարծես թե տեսնում ենք մի ապաշնորհ ու անձնատուր զորավարի, որն անգամ պատկերացում չունի տարրական հնարքների և ծուղակների մասին, որը զոհվում է, իսկ նրա անգլուխ դարձած զորքը մինչև երեկո դիմադրում է թշնամուն: Այսքանից հետո էլ անընդունելի է, թե ինչու սկզբում հայերն անցան Տղմուտի աջ ափը, եթե հիմա էլ պիտի անցնեն ձախը և «կատարելով իրենց մարտական առաջադրանքը ... նահանջեն երկրի խորքը» (մի՞թե ինքնասպանությունը մարտական առաջադրանք է), եթե ավելի վոքր վնասներով կարելի էր սպարապետի հետ նահանջել երկրի խորքը: Այս բոլորի պատճառը, մեր կարծիքով, սկզբնաղբյուրների անբավարար ուսումնասիրվածությունն է, տվյալների մակերեսային դիտարկումը:

Ստիպված ենք արձանագրել, որ ընդունված տեսական դրույթների դաշտում պատմագրությունը որոշակի առաջընթաց չի կատարել՝ վերաստեղծելու համար հայոց ե պարսից զինատեսակներն ու հատուկ դնդերը, սասանյան զորքի իրական զորադասավորությունը և ճակատամարտի տեղանքի բնութագիրը, երկու բանակների մարտավարական ոճը, ռազմավարության իրական սկզբունքները: Այսինքն անորոշության մեջ նկարագրվում է անհայտ թվով զորքերի անտրամաբանական բախումների մի շարք, որի վերջնական արդյունքը հայտնի է Եղիշեի և Փարպեցու, անգամ Թովմա Արծրունու գործերից:

---

35 Հ. Ա ղ ա բ ե կ յ ա ն. Ավարայրի ճակատամարտ 451.– ՀՍՀ, էջ 607:

Հաջորդ տասնամյակում նույն իներտ դործելաձևը շարունակվում է: Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունում վերը հայանի վերականգնմանը ակադ. Ս. Երեմյանը հետևյալն է ավելացնում. «Թվական գերակշռությունը պարսիկների կողմն էր, իսկ բարոյականը՝ հայերինը: ...Ահեղ ճակատամարտը սկսվեց ... կողմերը ձեռնամարտի բռնվեցին ... մինչև հետևակը կռվի մեջ էր, ձախ թևում Վարդան Մամիկոնյանն իր հեծելազորով անցնում է դետը և թափով հարձակվելով թշնամու աջ թևի վրա, հարկադրում նրան նահանջել, իսկ ետևում կանգնած պարսկական «անմահների գունդը» առանց մարտի բռնվելու փախուստի է բռնվում: ... մարտի թեժ պահին հայկական մի քանի ջոկատներ ետ են քաշվում մերձակա բլրակները: Այս օդտագործում է Մուշկան Նիսալավուրտը և աջից հարձակում սկսում հայկական զորքի ձախ թևում: ... ամբողջ հարթությունը ծածկվում է (երկու կողմերի – Հ. Հ.) դիակներով: Մուշկան Նիսալավուրաը կռվի մեջ է մտցնում մարտական փղերը: Թշնամին իր փղերի դնով շրջապատում է Վարդան Մամիկոնյանին և նրա ջոկատի հեծյալներին: Այստեղ հերոսի մահով ընկնում են հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցները: Մայրամուտին մարտը դադարում է: Զոհերի թիվը մեծ էր: Սակայն հաղթանակի հարցը մնում էր չլուծված»[36]: Ցավոք, այս դրվագում ներկայացված զորաշարժերի ետևում էլ չի նկատվում ենթատեքստ, մոտիվ:

Մասամբ իրավացի էր Հ.Ազաբեկյանը, երբ դրում էր, որ չորրորդ դարում հայերը կռվում էին Վեդետիոսի ձեռնարկի կանոններով[37], իսկ հին Հայաստանին քաջ ծանոթ էին ռազմարվեստի ձեռքբերումները և դրանք հաջողությամբ կիրառվում էին դործնականում: Ակնհայտ է, որ հայերը դրանք պիտի օդտագործեին նաև 451 թ. պատերազմում: Իրականում, պատմական վերականգնումների փորձերից բացարձակ չի երևում, որ հայոց բանակը 451-ին ոչ թե թշվառ ու պատահական զինված աշխարհազորի կուտակում էր, այլ մարզված ու հզոր մի բանակ, որը սարսափ կարող էր տարածել Ասիական տափաստաններից մինչև Միջերկրածով: Գործնականում պատմաբանները որևէ լուրջ համադրություն չեն կատարել Վեդետիոսի, անտիկ դարաշրջանի կամ վաղ միջնադարի մի որևէ սկզբնաղբյուրի և Ավարայրի մասին տվյալների միջև: Հիմնական պատճառները, մեր կարծիքով, հետեյալն են: Հայագետները, որոնք նյութի բերումով զբաղվել են ռազմարվեստով, պարզապես իուսափել են խորանալ դրա մեջ. կամ էլ բավականին մակերեսային պատկերացում են ունեցել դրա մասին. վկայությունը Ավարայրի, ինչպես նաև մյուս ռազմական բախումների մասին եղած պատմագրության արդասիքն է: Ուսումնասիրողների մի մասին էլ սեփական իմացությունները այս բնագավառում բավարար են թվացել, վերականգնելու համար 451-ին կատարվածը: Երբ գործ ունենք 1 : 100 000 մասշտաբի քարտեզի հետ, ուր 1 սմ հատվածը համապատասխանում է 1 կիլոմետրի, սրանով կարելի է, իրոք, լուծել տեղայնացման ընդհանուր խնդիրներ, սակայն դժվար է համոզված տեղադրել Ավարայրը կամ մի այլ ռազմադաշտ: Զուգահեռի անհրաժեշտ կլինի դիմել լրացուցիչ կռվանների

36 ՀԺՊ, էջ 186–187:
37 Г. О. А г а б е к я н. Նշվ. աշխ., էջ 101:

և ավելի մանրամասն քարտեզների: Սրանով հանդերձ, հենց Հ. Ազաբեկյանի կատարած տեղայնացումն է ներկայումս ընդունելի, քանի դեռ ի վիճակի չենք այն ստուգելու նոր փաստերով: Ռազմական բախումների վերականգնման մյուս թերությունը ևս միջազգային է: Շատ դիտնականներ շուրջ երկու դար հիացած են ռազմական տեսաբան Ֆոն Կլաուզևիցի մեծագրությամբ,[38] և հին Աշխարհի ու վաղ Միջնադարի ռազմարվեստը օժտում են այնպիսի հատկանիշներով ու սկզբունքներով, որոնք ընդհանուր ոչինչ չեն ունեցել անցյալի բանակների գործելակերպի, արամաբանության ու ռազմավարության հետ: Ուստի, ժամանակակից պրոֆեսիոնալ զինվորականը արդի ռազմական թատերաբեմում ձեռք բերած իր փորձի և տեսության դիրքերից, հեռու բուն ազգությունության ծալքերի ուսումնասիրությունից, չի կարող անաչառ դատել անտիկ կամ վաղ միջնադարի ռազմական բախումների մասին. նորի իմացությունն այս դեպքում խանգարող հանգամանք է, երբեմն անդամ վնասակար: Ավարայրի դեպքերի օբյեկտիվ քննությանը խոչընդոտում է նաև ավանդապաշտությունը: Եթե պատմական տվյալները կոչված են բազմակողմանի քննության միջոցով լուսաբանելու անցյալի օրինաչափությունները, ապա Ավարայրի՝ սկզբնաղբյուրներից վերցրած ու փոխադրած, պատմությունը դարձել է ավանդություն, իսկ սրբացված հերոս նահատակների անուններով պսակված՝ վեր է ածվել անառարկելի իրողության: Ուստի, երբ այն դիտվում է որպես սրբություն, պաշտամունքի առարկա է, բայց երբ մատուցվում է որպես պատմություն, ապա հեռանալով դիտության կանոններից, չի արժանանում վերստին քննելու և վերախմաստավորվելու հնարավորությանը. այս արգելակիչ կապասպարն էլ հետապնդում է Վարդանանց մասին իրական տվյալների բացահայտմանն առ այսօր:

Վերն ասածից կարելի է հետևություններ անել հայ ժողովրդի պատմության հանդուցային դրվագներից մեկի՝ Ավարայրի ճակատամարտի վերականգնման մի շարք փորձերի և այս հարցում առկա անելիքների վերաբերյալ: Պատմությունն աղավաղված է և այն պետք է վերաշարադրել: Սրա ճանապարհն էլ մեր արժեքավոր սկզբնաղբյուրների ուշադիր վերընթերցումն է, համեմատումը ժամանակի պատմական հենքի ու դրա առանձնահատկությունների հետ: Ինչ վերաբերում է Ավարայրի դաշտի նույնացմանը, ապա սա կպահանջի նպատակային հնագիտական պրպտումներ բոլոր հնարավոր վայրերում (մեր կարծիքով, դուցեև միջազգային՝ իրանա-հայկական մի արշավախմբի ուժերով), ինչպես նաև նորագույն մեթոդների կիրառում, օրինակ, օդային լուսանկարների մեկնությունն, որ մոտ կամ հեռավոր ապագայի գործ է: Սակայն արդեն այսօր կարելի է չբավարարվել պատմական մեկնությունների քննադատությամբ, այլ պրոնել եղած փաստերի վերծանման հնարավորություններ:

Վերն արդեն նշեցինք, որ պատերազմող կողմերի ռազմավարությունն ու մարտավարությունը սերտորեն փոխկապակցված են, և սրանցից մեկը լրացուցիչ սկզբնաղբյուր է մյուսի համար: Երբեմն էլ մի կողմի ծրագրերը հայելային ձևով արտացոլվում են մյուսի ռազմավարության մեջ: Տիրա-

38 Клаузевиц (Карл). О войне. Пер. с немецкого А. К. Починского. М., 1934.

պետով տեսակետն այն է, որ «Հայկական զորքի հրամանատարության նպատակն էր՝ ճակատամարտել պարսկական բանակի դեմ, վճռական հարձակումով թուլացնել նրան, ... խնայելով սեփական ուժերը՝ նահանջել երկրի դժվարառու տեղանքը և շարունակել պայքարը»[39]: Ստացվում է, որ բանակի նպատակն է ճակատամարտելը, վճռական հարձակում կատարելը և միևնույն ժամանակ սեփական ուժերը խնայելը , որպեսզի սրանք էլ հետո նահանջեն դժվարառու վայրեր: Դատողության երկրորդ կեսը մոտ է ճշմարտությանը, որ շարադրված է աղբյուրներում, բայց առաջին մասը լրիվ հակասում է երկրորդին: Սա ստուգելու համար, տեսնենք, թե ինչ էր անում այս նույն ժամանակ հակառակորդն իր թիկունքում. «...պարսից զորքին ոչ ոք չէր արգելում հասնելու Հայոց աշխարհը՝ սպանությամբ, գերեվարությամբ ու ավերածություններով՝... առավել արագ շարժվում էր պարսից զորքը... /և/ Տզմուտ գաչտի շրջափակ տեղում... բանակեցին»[40]: Ապա՝ «Պարսից զորքն սկսեց իր տեղում վխտալ: Իսկ Հայոց զորքն անցավ դեռը»[41]: Ինչպես երևում է, հայոց կանոնավոր զորքի հայտնվելը կանգնեցրեց պարսից բանակը, և վերջ տրվեց խաղաղ բնակչությունը կոտորելու ու կողոպուտին: Այժմ պարսիկները երկմտանքի առաջ էին: Հավանաբար, ճակատամարտի համար տեղանքը հարմար չէր: Կար էլ ավելի կարևոր պատճառ. Հայոց երկրում միաբանություն գրեթե չկար, բայց վերջին պահին էլ պարսիկները վստահ չէին, որ հակառակորդը լրիվ տրոհել է իր ուժերը: Վարդանանց երևալը (անկախ զորքի ընդհանուր թվից, որ կքննարկենք ստորև) անսպասելի էր պարսիկների համար: Սա ոչ թե սոսկ մարտահրավեր էր, այլ քաղաքական քայլ. հայերը (միևնույն է, թե որ բանակը ներկայացնող) չհանդուրժեցին պարսից որևէ ներկայություն իրենց տարածքում: Նիսալավուրսը պիտի ծանրութեթև աներ՝ կռվե՞լ, թ՞ե սպասել մի փոքր էլ, դուցե գործն հասնի բանակցությունների և գիջումների հայերի կողմից:

Այս կամ նման պարագայում վերը հղած «ծրագիրը» միայն մասամբ է իրական: Հայոց բանակին գործնականում ո՛չ պետք էր ճակատամարտել, ո՛չ էլ վճռական հարձակումով թուլացնել թշնամուն, այլ սկզբից ևեթ խնայել սեփական ուժերը, զորաշարժվել գետի և սեփական տմրացված ճամբարի միջև, ապա և նահանջել երկրի խորքը, ներքաշել թշնամուն դժվարառու վայրերը, տրոհել նրա ուժերը և պարտադրել ծանր ու երկարատև լեռնային պարտիզանական պատերազմ:

Այս պարզ ծրագրից՝ անվանենք այն ռազմավարություն, պիտի բխեին հայոց բանակի մյուս քայլերը: Դրանք էին. թշնամուն գամել ափին, միջին հեռավորության մարտում նրան պատճառել վնասներ, տրոհել նրա ճամբարը, անցնել-գրավել գետի հակառակ ափը միայն պատեհ իրավիճակում: Փոխարենը, իբր, հայոց զորավարն իր ավելի փոքրաթիվ ուժերով անցնում է գետը, կամովին ընկնում ծուղակը, զոհում իրեն և ընտիր շքախմբի քաջերին, զորքը թողնելով առանց մի այնպիսի զորավարի, որ կենդանի լեգենդ էր, և նրա ներկայությունը գաչտում ակտիվ կամ պասիվ, պարտա-

39 Հ. Ա ղ ա բ ե կ յ ա ն. Ավարայրի ճակատամարտ 451.– ՀՍՀ. էջ 607:
40 Փ ա ր պ ե ց ի. գրվագ Բ. գլուխ ԼԷ:
41 Ե ղ ի շ ե. VI:

դիր: Իսկ ո՞վ պիտի 4 կմ երկայնքով դաշտում գուշակեր թշնամու զորաշարժի (վխտալու) թաքնված իմաստը, եթե ոչ հրամանատարը, որը կանգնած կլիներ որևէ բնական կամ ձեռաշեն բարձունքի վրա: Սրանք միայն ընդհանուր կարգի նկատառումներ են, որոնց հետ պետք է հաշվի նստել մանրամասները վերլուծելուց առաջ: Այն, որ Վարդան Մամիկոնյանը հասարակ մի ծուղակ չէր կարող չնկատել՝ հայտնի է զորավարի պատկառելի փորձից, գիրքից և, զանազան այլ նկատառումներից էլ բացի, պարսից ուժերի դեմ նրա ունեցած հաղթական բախումներից Ավարայրից ոչ շատ առաջ՝ Խաղխաղի ճակատամարտում[42]:

Առայժմ բավարարվենք սրանով և դիմենք ընդհանուր իրավիճակին երկրի սահմաններում: Հայտնի է, որ քաղաքական իրադրությունը Պարսից կայսրության հետ շատ լարված էր, ամեն կողմից Հայոց աշխարհում սպասում էին հարձակում: Այս նկատառումով, հայոց զինված ուժերը ամրացված էին երկրի գլխավոր կենտրոններին ու սահմաններին: Ուժերի մի զգալի մասն էլ կենտրոնացած էր երեք կետերում՝ պարսից ամենահավանական ներխուժման ուղիների վրա. ա) Վարդան Մամիկոնյանը գտնվում էր Վրաց սահմանի վրա, սպասելով հարձակման Ճորա լեռնանցքի մարզպանի կողմից, բ) Ատրպատականի դեմ կանգնած էին Ներշապուհ Ռմբոսյանի ուժերը, գ) մարզպան Վասակ Սյունին հարձակման էր սպասում Աղվանքից դեպի Սյունիք[43]: Եղիշեն հաղորդում է, որ իրավիճակի փոփոխության հետևանքով՝ Վարդանը ուղարկվեց Աղվանքի կողմերը՝ Խաղխաղ, ուր էլ տեղի ունեցավ նշանավոր մի ճակատամարտ: Ներշապուհն իր գնդերը տեղաշարժեց դեպի Հեր և Զարևանդ, ինչպես տեսնում ենք, ապագա Ավարայրի դեպքերի կիզակետին մոտ: Եվ սա էր բոլոր կողմերից պաշարված երկրի տագնապալի վիճակը: Ժլատ սկզբնաղբյուրներից կարելի է կռահել, որ Ավարայրին համազոր կռիվներ Հայոց սահմաններին էլի են եղել, որոնք մասամբ խտացած են Տղմուտ գետի ափին կայացած սրբազան պատերազմի անցքերում: Հայոց ռազմավարությունն այն օրերին, երբ Բյուզանդական կայսրությունը կլանել էր երկրի մի մասը և լուռ դիտում էր Հայոց ու Պարսից գաղափարական պատերազմի սառն ու տաք դրվագները, պիտի բխեր ուժերի պատրաստ մարտական կեցվածքից, միջոցների խնայողությունից, թշնամուն նրա համար ամենաանհարմար եղանակով ղիմագրավելու մղումից: Հայաստանը դեռ բավական ուժեղ էր, և այս ծրագիրը իրատեսական էր, եթե նաև հաշվի առնենք Սասանյանների մյուս սահմաններին կուտակվող սպառնալիքները: Երկու խոսքով՝ Հայոց ռազմավարությունը կարելի է անվանել ակտիվ պաշտպանություն, բայց ոչ թե ինքնասպանություն, ինչպիսին այն փաստորեն ներկայացվում է տեսական գրականության մեջ:

---

42 Ե ղ ի շ ե, IV: Փ ա ր պ ե ց ի, դրվագ Բ, գլուխ ԼԵ:

43 «Եւ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանէին:

Զգունդն առաջին տային ցՆերշապուհ Ռմբոսեան, և դումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Աարպատական Աշխարհին:

Եւ զգունդն երկրորդ տային ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից:

Իսկ զգունդն երրորդ տային ի ձեռս Վասակայ իշխանին Սիւնեաց, որ ոչ ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ ներքին խորհրդոցն իւրոց» (Ե ղ ի շ ե, III):

Այժմ գոնե ընդհանուր գծերով ծանոթանանք Հայոց մարտավարական (տակտիկական) նկարագրին[14]: Հռոմեական բանակների դիվանագիտական հաղթանակներին ուղեկցող հաճախակի ռազմական անհաջողությունները մի քանի դարերի ընթացքում նույն հայկական ու հարևան իրանական բանակների ազդեցությամբ լիովին վոխեցին ուշ հռոմեական – վաղ բյուզանդական բանակների նկարագիրը: Փոխարենը հռոմեացիներն իրենց ուսուցիչներին՝ հայերին, պարթևներին, պարսիկներին ներարկեցին հետևողական պայքարի ու պաշարողական կռվի կանոններն ու բարձր տեխնիկան: Ավարայրի ճակատամարտի մասին մեր սկզբնաղբյուրների հայտնի տվյալների ետևում կարծես թե նման երևույթների մասին որևէ ակնարկ չի երևում: Սակայն սխալ կլիներ կարծել, թե Եղիշեն ու Փարպեցին, քանի որ բավական հեռու են ռազմական արվեստից, ուսանելի ոչինչ չեն հաղորդում այս բնագավառի մասին: Մեր սկզբնաղբյուրների մի ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ ձեռքի տակ եղած արժանահավատ տվյալները մի դեպքում վոխկապակցված, երբեմն էլ էկլեկտիկ բաշխված են գրական-պատմական ստեղծագործության տարբեր հատվածներում: Օրինակ, մարզպան Միհրներսեհի խոսքերից, որը պատերազմից առաջ իբր Վասակի և մյուսների միջոցով հետախուզում էր հայոց ղինված ուժերը, տեղեկանում ենք, որ նրան հայտնի է Հայոց աշխարհի ղինված ուժերի թիվը՝ 60 հազարից ավելին է այն, բայց մարզպանը կուզենար իմանալ ավելի ճշգրիտ, թե սրանցից քանիսն են սպառազեն, քանիսը՝ առանց զենքի լոկ աղեղնավոր, քանիսը վահանավոր հետևակ[15]: Բանից անտեղյակ մեկը կկարծեր, թե Եղիշեն թյուրիմացաբար է տալիս առանց զենքի աղեղնավորների զորամիավորման տեսակը, իսկ վահանավոր հետևակը նշելիս մոռացել է ասել սրա կրած զինատեսակը: Բայց իրականում, մեր պատմիչը բարեխղճորեն ու միանշանակ հաղորդել է ինչպես զորամիավորումների անունները, այնպես էլ տեսքը: Պարզաբանենք: Մ. թ. IV–VI դդ. բանակները անցյալ դարաշրջանի դասական հետևակի և հեծելազորի համեմատությամբ լիովին կերպարանափոխված էին: Զորքի հարվածային ուժն այժմ ծանրազեն հեծելազորն էր՝ ղինված նիզակներով, որին օժանդակում էին թեթև աղեղնավորները («առանց զենքի լոկ աղեղնավոր»): Հետևակը՝ նախկին բանակների պարծանքն ու գրոհային ուժը, ոչ մի հարձակողական դեր չէր խաղում, այլ նմանվում էր մեծ դռների պես վահանների ետևում կանգնած անզեն մարդկանց («վահանավոր հետևակ»): Հետևակայինները համապատասխան հրամանով բաղում էին, ինչպես դռները, իրենց վահանները՝ ստեղծելով սեպական շարքերում յուրահատուկ միջանցքներ՝ ելումուտ անող հեծյալ զորամիավորումների համար, կամ էլ փակում էին վահան-դռները ինչպես մի հոծ պարիսպ[16]: Ահա սա է Ավարայրին նախորդող և հաջորդող երկու-երեք դարերի անտիկ ու վաղմիջնադարյան Արևելքի,

---

14 Հ. Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Հռոմեա-Արևելյան առնչություններ ռազմական տակտիկայի բնագավառում.– «Հանրեր Երևանի համալսարանի», 1983, N 3, էջ 49–70. Հատկապես Ավարայրի մասին տե՛ս էջ 67–68: Այս ուսումնասիրությունը հավանաբար վրիպել է Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության II հատորի հեղինակների ուշադրությունից:

15 Ե ղ ի շ ե, IV:

16 Հ. Պ. Հ ա կ ո բ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 69–70:

հայկական և բյուզանդական բանակների պիմպիծը: Նման մարտավարությունն կիրառող ամենաուժեղ բանակներից էր հայկականը, որը մնաց անգերազանցելի: Այս տիպի բանակ էլ պիտի կանգնած լիներ Տզմուտ գետի «հայկական» կողմում, շատ հավանական է նաև ախոյանի կողմից: Տիպային զորագասավորությունը թելադրում էր համապատասխան տակտիկական գործողություններ՝ պատերազմի զաշտում և մշակված վարքագիծ՝ բախումներից դուրս չվերմների ժամանակ: Վերը հիշված վահանավոր հեռակը սովորաբար հույժ կարևոր էր բաց զաշտում և միաժամանակ երկրորդական նշանակություն էր ստանում ամուր ճամբարված հեծելազորի պեպքում: Պարսից գերակշիռ ուժերի ճնշման դեպքում հայկական թիկունքում կառուցած ճամբարը էական նշանակություն էր ստանում, ինչպես որ պարսից ճամբարը՝ Առանձարի հարձակման ժամանակ:

Նույն մարզպան Միհրներսեհի հարցումներից, Եղիշեի միջոցով, տեղեկանում ենք, որ պարսիկները սպասում էին, որ կռեանեն ցցապատնեշով ու իրամասով ամրացված հայկական բանակ. վերջինս, սակայն, ուրիշ հանգամանքներում՝ ճամբարից դուրս «բաց զաշտում», նմանվելու էր վերը նկարագրած՝ հեռակով օժանդակված այրուձիու, որը կռվելու էր ճակատ առ ճակատ կամ էլ գրոհելու էր համապունդ մի տեղի վրա: Սրանք հույժ կարևոր տվյալներ են, բերված Եղիշեի կողմից հենց Ավարայրի ճակատամարտի անցքերը լուսաբանելու համար, բայց չեն արժանացել ուսումնասիրողներից և ոչ մեկի ուշադրությանը: Երբ վահանավոր հեռակով պաշտպանված այրուձին դուրս էր գալիս իր թաքստոցից և գրոհում ախոյանի այրուձիու վրա, հաճախ կարելի էր տեսնել, որ վերջինս «փախչում» է, կատարելով վերադասավորություն և ստանդարտ նահանջ-վերադարձի գործողություն. հակառակորդի բանակը, եթե ծանոթ էր այս հնարքին, թշնամուն չէր էլ հետապնդում, այլ ընտրելով հարմար պիրք ու կատուցվածք, սպասում էր նրա վերադարձին: Եղիշեի ու Փարպեցու մոտ մի անգամ չէ, որ հանդիպում ենք «փախչող» հայոց կամ պարսից զորագնդեր, որոնք իրենց հետևից տանելով ախոյանին, անսպասելի հարված են հասցնում կամ ավելի հարմար վերադասավորվում հետևում:

Ձիրավի ճակատամարտի նման[17], Ավարայրում ևս երկու պատերազմող բանակների կողմից կիրառվում են հեծելազորային պայքարի միանման եղանակներ: Հայերը «սկզբում փախուստի մատնեցին Պարսից զորքերին»[18]: «Մատյան գնդի հատատուն կազմակերպությունը քայքայվեց-ցրվի եկով, և նա դեռ պարտություն չկրած փախուստ տվեց»[19]:

Եղնելով իր զորքի հարաբերական փոքրաթվությունից՝ Վարդան Մամիկոնյանը որոշել էր իր բանակը դասավորել ու պատրաստել մարտի առավել նպատակահարմար ձևով: Գիտության մեջ պարսից զորքի թիվն ընդունված է 80–90 հազար մարդ՝ օժանդակված 13 մարտական փղերով: Սա մատյածին թիվ է. մասնավորապես Միհրներսեհին վերագրված գրվածից մենք գիտենք, որ այս մարզպանը հետախուզում էր, թե Վարդանանց բանակում քանի՞սն են քաջ զինվորների պարագլուխները, «որպեսզի նրան-

17 Նույն տեղում, էջ 64–66:
18 Փ ա ր պ ե ց ի. գրվագ Բ, գլուխ ԼԹ:
19 «Կուռնդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծ ամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ բաջ ի փախուստ դառնային» (Եղիշե, VI):

ցից յուրաքանչյուրի դեմ երեքը պատրաստի, բացի բոլոր մնացած բանեերից»[50]: Հետևաբար, պարսիկները, եթե ոչ եռապատիկ, ապա կրկնապատիկ շատ կարող էին լինել հայերից (120–180 հազար), եթե, իրոք, մի անգամ ևս կրկնենք, հայոց բանակը Ավարայրում կազմում էր 60 հազար: Անդամ այս պայմաններում, Վարդանը հաշվի էր առել իր զորքերի ավելի համեստ թիվը և պարսիկների անդրադարձման եղանակը: Նիսալավուրաը իր ուժերը տեղաբաշխել էր գաշտի ողջ լայնքով: Վարդանն էլ հայոց բանակը դասավորեց բավական խոր, բայց համեմատաբար նեղ ճակատով, ստեղծելով խոր քառակ, ինչպես որ ութսուն տարի գրանից առաջ դասավորված էր հայ-հռոմեական զորքը Ջիրավում[51]: Ընդլայնելով իր բանակի ճակատը՝ Վարդանը կթուլացներ կենտրոնը, և նա դերադասեց հակառակորդի ուժեղ կենտրոնին հակադրել ամուր և դիմադրողունակ հայոց կենտրոնը: Ընտրելով լավագույն տարբերակը՝ սպարապետն, այնուամենայնիվ, զիջումներ էր իր բանակի մի թուլությունը, կարճ թևերը, որ հզի էին շրջանցման վտանգով: Այս գործոնը թուլացնելու համար Վարդանը հայոց զորքը բոլոր կողմերից շրջապատեց այրուձիով. «յամենայն կողմանց տակաւ գայրուձիս կազմէր» և զորքի ճակատը դարձրեց գաշտի բոլոր կողմերը՝ «ընդ ամենայն երեսս դաշտին»: Տվյալ պահին, հետևելու համար մարտական գործողությունների իրական ընթացքին, նորից պետք է անդրադառնանք հայոց զորքի թվին: Վերն արդեն նշել ենք, որ ըստ Եղիշեի հայերը Ավարայրում կազմում էին 66 հազար, իսկ Փարպեցու մոտ սրա վերաբերյալ տվյալներ չկան: Խնդիրը պարզելու համար դիմենք 451 թ. նկատմամբ ոչ հեռավոր անցյալին: 385/387 թ. Հայաստանի բաժանումով Մեծ Հայքից անջատվեցին Ուտիքը, Փայտակարանը, «Մարաց ամուր աշխարհը», Գուգարքի հյուսիսային գավառները (ապա քիչ անց էլ՝ ողջ Աշխարհը), Ագձնիքը, Կորդուքը, Նոր-Շիրականը, Արցախը, այսինքն Մեծ Հայքի մոտ մեկ երրորդը: Մնացած միջնաշխարհն էլ (մոտ 185–190 հազար քառ.կմ) բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Առաջինին անցան Բարձր Հայքը, Ծոփաց աշխարհը և Մեծ Ծոփքը՝ միջնաշխարհի մոտ մեկ չորրորդը, իսկ երկրորդին՝ Տայքը, Այրարատը, Այոնիքը, Տուրուբերանը, Վասպուրականը, Մոկքը՝ միջնաշխարհի մոտ երեք քառորդը[52]: Այսպիսով, մարզպանական մասում մնում էր Մեծ Հայքի ընդհանուր տարածքի մոտ 45 տոկոսը: Տվյալ հենքի վրա հիշենք, որ ըստ Զորանամակի, հայոց զորքի ընդհանուր թիվը կազմում էր 124 հազար մարդ[53]: Այս գինված ուժերի մի զգալի մասը երկրի բաժանումից հետո, բնականաբար, անցավ մյուս աշխարհներին ու գավառներին, տարաբաթիվ զորքեր ունեցող զգեշխությունների մի մասին: Համենայնդեպս, համամասնորեն՝ մարզպանական Հայաստանում կարող էր լինել 50 հազար, առավելագույն-

50 Ե ղ ի շ է. V:
51 Հ. Պ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 65:
52 ՀԺՊ, էջ 112:
53 Սասրագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիմարգեայ, բաժանեալ յերկուս հատորս. Հ. Երկրորդ. Էջմիածին, 1842, էջ 57–58: Զորանամակի արտանկար-պատճենը՝ առանձին մեծագիր թղթի վրա, կցված է նույն գրքին, էջ 58-59-ի միջև: Մանրամասն տե՛ս Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя (глава X). СПб., 1908.

նը 70 հազար զորք։ Նույն չափի զորք էլ՝ 66 000, Եղիշեն տալիս է Ավարայրում որպես Վարդանանց բանակ։ Վերջինս գործնականում անհնար է. եթե այդ օրերին հայերն անգամ լիներին կատարյալ միարան, ապա անհրաժեշտությունից ելնելով՝ զորքը պետք է բաշխված լիներ սահմանների և երկրի ստրատեգիական հանգուցակետերի միջև։ Հիշենք վերը բերած Եղիշեի հաղորդումն այն մասին, որ հայոց զորքերը հիմնականում կանգնած էին Վրաց, Աղվանից և Ատրպատականի սահմաններին։ Այսպիսով, Վարդան Մամիկոնյանի զորքերը կարող էին կազմել առավելագույնը 16 հազար զինված մարդ, այն էլ շատ մեծ վերապահումներով, որ կրկին գործնականում բացառում ենք։ Այս նույնը կամ ուրիշ ավելի փոքր թիվ է ստացվում նաև մի այլ եղանակով անցկացված քննությունից։ Ավարայրում Եղիշեի նշած չորս գնդերը Զորանամակի տվյալների հետ համեմատելիս դժվար չէ նկատել, որ գնդերում զինված ուժերի թիվը հետևյալն էր.

ա) Ներշապուհ Արծրունի (1000), Մոկաց Մեծ իշխան (1000), օժանդակ ուժեր՝ ենթադրենք նույնքան (2000), ընդամենը՝ մաքսիմում..... 4000

բ) Խորեն Խորխոռունի (1000), Արսեն Ընծային (4000), Ներսեհ Քաջբերունի (100), Արաակ Պալունի (300), Գնունյաց Մանուկ Վահան (500), Գարեգին Սրվանձտյան (?), ընդամենը՝.....5900-6000

գ) Թաթուլ Վանանդեցի (1000), Տաճատ Գնթունի (300), Դիմաքսյան Հմայակ (300), օժանդակ ուժեր՝ ենթադրենք նույնքան (մոտ 1500),.....մոտ 3000

դ) Վարդան Մամիկոնյան (1000), Արշավիր Արշարունի-Կամսարական (600), Համազասպ Մամիկոնյան (տե՛ս Վարդան Մամիկոնյան).....մոտ 1600։

ընդամենը՝ 14 600։

Կրկին ստացվում է մի քանի անգամ ավելի փոքր թիվ, քան Եղիշեի 66 հազարն է։ Նկատենք, որ հաշվարկը մոտավոր է, և ավելի մոտ ճշտության հասնելու համար կպահանջվեին լրացուցիչ տվյալներ։ Մասնավորապես, շատ հավանական է, որ նախարարական գնդերը պատերազմի դաշտ դուրս բերած լիներին իրենց զինված ուժերի միայն մի մասը։ 66 հազարանոց հայկական բանակի ներկայությունը Ավարայրի դաշտում ուղղակի թյուրիմացություն է, բայց ոչ թե մեր պատմիչի գրած գործի նախնական տարբերակների սխալը։ Հավանաբար վերը նկատած վրիպակը թույլ է տրված Եղիշեի գործի հետագա խմբագրումների ժամանակ։ Եթե ուշադիր ընթերցենք Եղիշեի հետևյալ հատվածը, կնկատենք. «Երբ այս բոլոր չարությունները Միհրներսեհը տեսավ նրա (Վասակի – Հ. Հ.) մեջ, իր անձից հույսը ավելի նրա վրա դրեց։ Հարցնում և ստուգում էր, թե ընդամենը քանի՞ մարդ կա Հայոց աշխարհում Վարդանի գնդի մեջ։ Երբ նրանից լսեց, թե վաթսուն հազարից ավելի են, նա տեղեկություններ պահանջեց...»[54]։ Հատվածից կարելի էր կարծել, թե Վարդանի գնդերի մի

---

54 «Քանի՞ այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն» (Եղիշե, IV)։ Աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Եղիշեի Վարդանանց պատմությունը, էջ 172։ Ակադ. Հովսեփ Օրբելին հետևյալ կերպ է թարգմանել ռուսերեն այս հատվածը. "... Миһрнерсеһ... Спрашивал и уточнял, сколько мужей общим количе-

մասը Հայոց աշխարհում էր, մի մասն էլ դրսում, և խոսքը երկրի ներսում եղած այրերի մասին է: Կարել էր նաև մեկնել, թե Հայոց աշխարհի բոլոր գնդերը ենթարկվում էին Վարդանին: Սակայն նման մեկնությունները չեն դիմանում քննադատությանը: Բերված հատվածում «Հայոց աշխարհում» եղած բոլոր զինված ուժերի և «Վարդանի գնդի մեջ», որոնք անհամատեղելի մեծություններ են, գրված է, ըստ երևույթին, հետագա խմբագրություններից մեկում՝ հավասարության նշան, կարծում ենք նույնիսկ «ի գնդին Վարդանայ»-ը հետագա ժամանակների հավելում է: Այս անհամատեղելիությունը շտկելիս պատմական բոլոր կարգի տվյալները համահունչ են դառնում Եղիշեի ազբյուրին այն առումով, որ մարզպանական Հայաստանի զինված ուժերը, լինեին սահմանների վրա, թե մյուս կարևոր կետերում, բոլորը միասին կազմում էին 66 000 մարդ: Ավարայրի ճակատամարտի նշանակությունը չափազանց մեծ էր և ժամանակի ընթացքում սերունդների աչքերում նրա բախտորոշ դերն ավելի էր աճում: Դպիրը, որ արտագրում էր Եղիշեի այս առղերը, տարակուսում էր, թե 60 հազարը ի՞նչ «Հայոց աշխարհ»-ին էր վերաբերում, թե այս մեծ պատերազմ ներքաշված Վարդանի գնդերին միայն. այս և նման դեպքերում սովորաբար հաղթում էր մաքսիմալիզմը[55]:

Ստուգողական հաշվարկների մի այլ հնարավորություն էլ տալիս են մեր սկզբնազբյուրներում առկա կրկնակի ստանդարտները: Սրանցից մեկին արդեն առնչվեցինք, երբ յուրաքանչյուր փղի մոտ, ըստ Եղիշեի, խմբված էր երեք հազարական ընտիր զինվոր, բայց մի քանի տող ներքև երեք հազարական զինվոր էր բաշխված նույն փղերից թե՛ աջ և թե՛ ձախ: Մյուս կրկնակի ստանդարտը ճակատամարտում զոհված այրերի ընդհանուր թիվն է: Եղիշեն նշում է 287 նահատակ և ևս ինը մեծամեծ նախարար[56]: Մեկ էլ այս թվին կցվում է մի այլ նահատակաց թիվ. «...և այլ ևս եւթն հարեւր և քառասուն այր /740/ ... և միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց»: Ստացվում է, որ զոհվածների թիվը դաշտում 296 է (287+9 նախարար), բայց միևնույն ազբյուրի համաձայն՝ նաև 1036 մարդ: Ղազար Փարպեցին էլ է տալիս սրան մոտ մի թիվ, սակայն, դուցե սկզբում տարակուսելուց հետո, փորձում է բացատրել, թե ինչու զոհորի թիվը հանկարծ կտրուկ աճում է. «Եվ ինչպես երկար փնտրելով և շատ քննելով, հարցնելով իմացանք թիվն այն նահատակվածների, որոնք պատերազմի դաշտում զոհվեցին ավագ նախարարների հետ՝ երկու հարյուր յոթանասուն և վեց մարդ էին: Նրանք, որոնց ամրոցներից հանելով սպանեցին սրով կամ փղաաակ տալով կոտորեցին՝ յոթ հարյուր և հիսուն տղա-

ством имеется в рати Вардана в Армянской стране" (Е г и ш э. О Вардане и войне армянской, перевод с древнеармянского акад. И. А. Орбели, Ереван, 1971, § 95-96, с. 93).

55 Թվերի ուռճացումը սովորական է տարբեր ժամանակներում ու երկրներում, մասնավորապես, ռուսաստանյան մատավորականության մի շարք պրպտումներից պարզվել է, որ Ավարայրից մոտ հազար տարի անց տեղի ունեցած նշանավոր Կուլիկովյան ճակատամարտում ռուսական զինված ուժերը կազմում էին մոտ 3000 մարդ, իսկ մոնղոլ-թաթարներինն էլ, իհարկե, ոչ 150 հազար:

56 «Այս երկերիւր ութսուն և եւթն նահատակք, ընդ ինն մեծամեծ նախարարսն անդէն ի տեղւոջն կատարեցան: Եւ յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր յայլոց նախարարաց տանէն, թող զայս երկերիւր ութսուն և եւթն...» (Ե ղ ի շ ե, V):

մարդ: Բոլորը միասին լինում են հազար և երեսուն վեց մարդ...»[57]: Հավանաբար, Փարպեցին Եղիշեի ասած 9 նախարարներին միավորում է վերոհիշյալ 287 (ըստ Փարպեցու 285)-ի մեջ: Մի այլ թիվ է տալիս Թովմա Արծրունին՝ 696 մարտիրոս[58]: Դժվար չէ նկատել, որ Եղիշեի և Փարպեցու գործերում շուրջ երեք ու կես անգամ ուռճացված են զոհերի թվերը, իրենց իսկ ասած սկզբնական ավյալների համեմատ: Արդեն այս հանգամանքը պետք է ուսումնասիրողներին հուշեր, որ հայոց զորքի ընդհանուր թիվն Ավարայրում ևս առնվազն մի քանի անգամ ավելի համեստ պիտի լիներ:

Մյուս կրկնակի ստանդարտը ներկայացված է ճակատամարտի նախօրեին՝ վերը բերված հատվածներից մեկում, ուր Առանձար Ամատունին պրոհում է պարսից պատժիչ զունդը, ունենալով 2000 մարդ. «Եվ ընդ առաջ նորա հազարօք երկու»[59]: Նույն զրվագի վերաբերյալ Ղազար Փարպեցին բերում է վեց ու կես անգամ ավելի փոքր թիվ. «իբրեւ երեք հարիւր հեծելով՝ երթայ լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից, և տայ զրգիռս...»[60]:

Հայոց զորքերի մարտական ձեռագիրը Ավարայրին մոտ տարիներին յուսալանման մի այլ հնարավորություն էլ ունի: Դա Ազվանքի սահմաններին տեղի ունեցած Խազխազի ճակատամարտն է, որի նշանակությունը աղբյուրներում ավելի նվազ է, քան պիտի լիներ իրականում: Մեր կարծիքով, սա ոչ միայն Ավարայրի նախաշեմն է, այլև սրան իր նշանակությամբ քիչ զիջող հաղթական մի ճակատամարտ թշնամու կեղտակիր ուժերի նկատմամբ: Այստեղ հայկական զորքերը կազմված էին երեք գնդերից.

Աջից Արշավիր Կամսարականն էր (ըստ Զորանամակի՝ 600 զինվոր)և Մուշ Դիմաքսյանը (300): Կենտրոնում Վարդան Մամիկոնյանն էր (1000): Ձախ թևում Խորեն Խորխոռունին (1000) և Հմայակ Դիմաքսյանը (300: Ընդամենը՝ 3000-3200):

Եթե ենթադրենք, որ նախարարական տները զաշտ էին դուրս բերել իրենց պաշտոնական զորքի մի մասը, ընդունենք մոտ 800-ական այրուձի երեք գնդերից յուրաքանչյուրում, ապա առավելագույնը կստանանք 2400 հեծյալ և սրան մոտ 2.5–3 անգամ գերազանցող հետևակ՝ 6000 մարդ, այսինքն Խազխազում պարսիկների դեմ դուրս էր հանված մոտ 8–9 հազարանոց հայկական բանակ, որ այն ժամանակների համար պատկառելի թիվ էր, գրեթե մեկ ու կես լեգեոն: Այս թիվը, որքան էլ մոտավոր է, չէր կարող էապես տարբերվել Ավարայրի դաշտ հանած հայոց զորքի թվից: Եթե հաշվի առնենք, որ մարտադաշտ էր հանվում, Զորանամակի տվյալների նկատմամբ, գործնականում ավելի փոքրաթիվ զորք, որ ամենուր մեր քննած աղբյուրներում ունենք կրկնակի ստանդարտներ, որոնց հետ չի կարելի հաշվի չնստել, ինչպես նաև հենվելով Խազխազի ճակատամարտի ընձեռած թվական և մարտավարական բնույթի տեղեկություններին վրա,

57 Փ ա ր պ ե ց ի, գրվագ Բ, գլուխ ԼԹ:

58 Վարդանը « և քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն և ընտիրքն, մեծ նահատակք Վարդան և Վահան, և զվկայիցն անուն ժառանգեալ կատարեցան ի Քրիստոս սուրբ դունդն Հայոց, ոպլ ոգիք» (բաղկացած 696 հոգուց): Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917: Տե՛ս Դպրութիւն Երկրորդ, էջ. Ա, էջ 139–140:

59 Ե ղ ի շ ե. V:

60 Փ ա ր պ ե ց ի, գրվագ Բ, գլուխ ԼԷ:

կարելի է անել այսպիսի հետևություն: Ավարայրում հայոց չորս գնդերից յուրաքանչյուրում ընդգրկված կարող էին լինել առավելագույնը 3–4 հազար հետևակայիններ և 6–8 հարյուր այրուձի, այսինքն Վարդանաք կկազմեին մոտավորապես 16 հազար մարդ: Սա էլ, բացառված չէ, որ քիչ ավելի մեծացված թիվ է, քան իրականը, եթե չմոռանանք, որ մարզպանական Հայաստանի բոլոր զինված ուժերի գրեթե մեկ քառորդին է հասնում:

Անհրաժեշտ է շոշափել ևս մի բավական մշուշոտ թողնված խնդիր՝ զորքերի դասավորությունը, տվյալ դեպքում, այս դպալի չափով ճշգրտված բանակական սահմաններում: Հայոց վաղ միջնադարի բանակը՝ անտիկ հայկական զորքերի լիիրավ ժառանգը, ըստ էության, երբեք չի ուսումնասիրված պատշաճ մակարդակով, և դժվար է վերականգնել դրա ստորաբաժանումների կարգն ու թիվը: Սակայն խնդրին սատարող մի ուշագրավ տվյալ հանդիպում ենք Փավստոս Բուզանդի գործում, ուր նա թվարկում է. «Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս, գնդի գնդի, դրօշոտ դրօշոտ, վաշտուց վաշտուց...»[61]: Սրանց տեղի և թվի վերաբերյալ կան հետևյալ երկու նկատառումները: Նախ՝ Արածանիի ճակատամարտից առաջ Տիգրան Մեծն ու Միհրդատ Եվպատորը, համաձայն Ապիանոսի, հայոց բանակը բաժանեցին ըստ հռոմեական կարգի ջոկատների և կոհորտների, ապով սրանց մարզանքի պոնտական ուսուցիչների[62]: Մյուս իրողությունն էլ այն է, որ դարեր շարունակ միմյանց դեմ կռվող բանակները կամա թե ակամա ձեռք էին բերում միանման գիմագծեր ու պայքարի ձևագիր: Ուստի, օրինաչափ կլինի Առաջավոր Ասիայի վաղ միջնադարյան և վաղ բյուզանդական՝ անտիկ ռազմական արվեստի այս հեռանկարի, բանակների համեմատությունը: Խնդիրը բարդ է և աղբյուրների կարոտ, սակայն զիտակցելով հանդերձ, որ այն առանձին հետազոտության խնդիր է, տվյալ թեմայի սահմաններում չենք կարող այն շրջանցել: Հռոմեական բանակը, դարերի ընթացքում կրելով զանազան որակական և կառուցվածքային փոփոխություններ, Ավարայրի նախօրեին բաղկացած էր կոնտուբերնիումներից (մոտ 8-ական զինվոր), ցենտուրիաներից (100–120 զինվոր), մանիպուլաներից (250–300 զինվոր), կոհորտներից (500–600 զինվոր), լեգեոնից (6000–6095 զինվոր): Հռոմեական և բյուզանդական սահմաններին կանգնած էր 150 հազարից ոչ ավել զորք՝ հսկելու համար լայնածավալ կայսերական սահմանները (ուսանելի է համեմատել Ավարայրի ճակատամարտում հայկական բանակի պաշտոնապես ընդունված թվի՝ 66 հազարի, հետ): Սրանք հետևակային զորամիավորումներ էին, որոնց մեջ սկզբում արհեստական, ապա ներպաշնակ ներմուծվեցին հեծյալ միավորումներ՝ ալաներ. 500–1000 հեծյալ: Դանի որ կառուցվածքային ու մարտավարական որոշ խնդիրներում հայոց բանակները հռոմեացիների անմիջական զրույցներն էին, կարելի է մոտավոր հավասարման նշան դնել այս երկու բանակների գիմագծերի միջև, քանի դեռ անհասու են խնդրի խորացման համար լրացուցիչ աղբյուրներ: Պայմանականորեն, հայկական վաշտը կարող էր համապատասխանել մեկ հռոմեական ցենտուրիայի (վաշտում մոտ 100–120

61 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, երրորդ դպրութիւն, Է., աե՛ս էջ 25:

62 Հ. Պ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 51:

զինվոր): Հայոց մի դրոշը կարող էր նույնանալ ուշ շրջանի հռոմեական կոհորտին (500–600 զինվոր): Հայոց գունդը որպես ամենամեծ զորամիավորում՝ գուցե մասամբ էր համապատասխան լեգեոնին (մոտ 4000 զինվոր): Կարծում ենք, այրուձին ուներ հետևակից տարբերվող կառուցվածք. մասնավորապես, ուշագրավ է Փարպեցու կողմից բերած Առանձարի զինված բանակի թիվը՝ 300 հեծյալ, որ անմիջական աղերսներ չունի հռոմեական հեծյալ ալայի հետ, բայց և համարժեք է նույն հռոմեական մանիպուլային: Հավանաբար, այս զարաշրջանում հայոց բանակն ուներ նաև վաշտից քիչ փոքր (համազոր ավելի ուշ դասակներին կամ ջոկատներին) և մեծ (գուցե համազոր մանիպուլային կամ ավելի ուշ դումարտակին) տակտիկական միավորումներ էլ, որոնց խնդիրը շատ կարոտ է ուսումնասիրության: Այս, թեկուզ և պայմանական, ելակետը շատ ավելի լայն հնա-



Նկ. I
1. Վահանավոր հետևակ
2. Աղեղնավոր հետևակ
3. Հեծյալ ջոկատ 50 այրուձիուց, զույգ ջոկատը կարող էր կազմել «վաշտ»
4. Ժամանակավոր միջանցք հեծյալ զորաշարժերի համար

0 50 մ

բավորություններ է տալիս օբյեկտիվորեն վերականգնելու համար Ավարայրում հայոց զորքի կառուցվածքը, քան խնդրի շուրջ տիրող կատարյալ անորոշությունը: Եթե ընդունենք, որ Տղմուտ գետի ափին կանգնած հայոց զորքը մոտ երկու լեգեոն էր կամ քիչ ավելին՝ 12–16 հազար, և որ այն կառուցված էր քառեի տեսքով, ապա չորս գնդերից յուրաքանչյուրի միջուկը կկազմեր 600–800 հեծյալից բաղկացած այրուձին: Այն շրջապատված էր մոտ 3 հազարանոց հետևակով, որի կենդանի վանդակը բաղկացած էր մոտ երեք տասնյակի չափ 100 հոգանոց վաշտերից: Այս կառույցը Վարդան Մամիկոնյանը հուսալիության համար շրջապատել էր յուրաքանչյուր գնդին տրամադրած այրուձիու մի մասով (տե՛ս նկ. I):

Հետևակի քառանկյունը կամ քառեն ունենալու էր մոտ 100–120 մետրանոց ճակատ և մոտ 50 մ խորություն. գնդի դրված այս տարածությունը հնարավորին չափ համապատասխանում է Ավարայրի դաշտի առավել

հավանական վայրի տարածական չափանիշներին՝ Կարալիադինի մերձակայքում: Զորս նման գնդերի միջև պիտի լինեին միջանցքներ: Եղիշեն մի առիթով ակամայից տալիս է նման քառեի գաստավորության մոտավոր պատկերը[63]: Այն ուներ «առաջապահ», «վերջապահ» և զույգ «կողմնապահ» խոշոր միավորումներ, և այս միջուկի ներսում, անկասկած, ապահով շարժվում էր հեծելազորը, որն անհրաժեշտ պահին գուրս էր գալիս ու դիմում ակտիվ գործողությունների (տե՛ս նկ. I, II):



Նկ. II
Հայոց զինված ուժերը Ավարայրի դաշտում
1. Կենտրոնական՝ «առաջապահ», գունդը հեծյալ միջուկով և հետևակային վանդակով
2. «Կողմնապահ» գնդերը ձախից և աջից
3. «Վերջապահ» գունդը
4. Հեծյալ ջոկատ 50 այրուձիուց
Վերակազմությունը համաձայն Եղիշեի և Ղազար Փարպեցու

0 40 մ

Այժմ կարելի է պնդել, որ հայոց գունդն առաջինը չի անցել գետը, որովհետև այն կարող էր վերածվել կենդանի թիրախի պարսից ծավալուն ուժերի մեջ. կրկին, եթե այն եռապահիկ մեծ էր հայկականից, պիտի կազմեր մոտ 30 000 զինվոր: Ընդհակառակը, ենթարկվելով ճնշման, հայկական բանակն ակտիվացավ: Խոր քառեն նախատեսված էր, ինչպես տեսանք, երթի կամ ակտիվ պաշտպանության համար: Առջևում Տղմուտն ու Թշնամու գերակշիռ ուժերն էին: Ուստի Վարդանը նախատեսել էր պաշտպանական մարտերով նահանջել երկրի մերձակա ամրությունները: Նման մի ծրագիր իրագործելու համար հեծելազորով շրջապատված հայկական քառեն հարկավոր էր մասնաբաժանել, ապակենտրոնացնել, իսկ այս շարժերը սահուն կատարելու համար անհրաժեշտ էր, որ բանակի միավորումներն անցած լինեին երկարատև մարզանքներ: Փաստորեն, սա ի նկատի ունեն Եղիշեն և Ղազար Փարպեցին, երբ հաղորդում են. «Փախած գնում էր հայոց զորքի մի մասը»: Կամ «այնուհետև պարսից զորքերն ընկան հայոց փախստականների ետևից»[64], մի այլ հատվածում «Հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ էին ընկել լեռների հովիտներում»[65]: Հատկանշական է, որ Եղիշեի նշած հայոց գնդերում հրամանատարներն ու նիզակակիցները ըստ նախարարական ուժերի ստորաբաժանման սխեմայի՝

63 Ե ղ ի շ ե, IV:
64 Փ ա ր պ ե ց ի, գրվագ Բ, գլուխ ԼԹ:
65 Ե ղ ի շ ե, VI:

Զորանամակում, հիմնականում կրկին հարևաններ են: Արծրունին և Մոկաց Մեծ իշխանը (I գունդ), Խորխոռունին և Ընծայինը (II գունդ), Վանանդեցին և Գնթունին (III գունդ), Վարդան և Համազասպ Մամիկոնյանները, Արշավիր Կամսարականը (IV գունդ): Ուստի այս գնդերը և դրանց ստորաբաժանումները երկար տարիներ կողք կողքի մարզվելու ու կռվելու փորձ ունեին, և այս սկզբունքով Ավարայր հանած ոգի բանակը լավ համագործակցող մի հզոր կանոնավոր բանակ էր:

Ծանր պայմաններում և զգալի կորուստներով (մոտ 300 զոհ) իրագործելով իր առաջադրանքը՝ հայոց բանակը ձեռնամուխ եղավ ծրագրավորված պայքարի հաջորդ փուլին: Այն հրաժարվեց պարսկական հրամանատարությանն ամենից շահեկան ճակատամարտից, այլ ընտրեց վերջինիս համար ամենից անհարմար տարբերակը՝ նահանջեց երկրի անառիկ բերդերը՝ պատրաստ դիմադրելու թշնամու ապակենտրոնացված պաշարողական ուժերին[66]: Սա է իրողության գոնե առավել էական մասը, որ մեզ ի վիճակի է տրամադրել գրավոր աղբյուրների վաղագույն շերտերի և պատմամշակութային հենքի, մասնավորապես, ռազմական արվեստի ուսումնասիրությունից ստացված տվյալների համադրությունը: Կիրառելով տվյալ վիճակին առավել համապատասխան ծրագիրը, հրամանատարը նույնիսկ հետմահու՝ պայքարը հասցրեց իր նպատակակետին: Հայկական ուժերը տարան ռազմավարական հաղթանակ, որն ընդհանուր ոչինչ չունի բարոյական հաղթանակ և ֆիզիկական պարտություն ծեծված բանաձևի հետ:

Այս քննությունն, իհարկե, ամենևին չի հավակնում լուծում տալ Ավարայրի բոլոր խնդիրներին, այն փորձում է ուշադրություն հրավիրել վաղուց ի վեր հաստատված, բայց իրականում դիտության, մասնավորապես անցյալ դարերի ռազմական արվեստի մասին մշակված տեսության, ներկայիս մակարդակին խիստ չհամապատասխանող պաշտոնական կարծիքներին: Անկասկած, անցյալի վերաբերյալ նոր հուսալի աղբյուրներ ձեռք բերելու և սրանցով փաստացի տվյալները ճշգրտելու ամենահեռանկարային ուղղությունը հնագիտական պրպտումներն են հանրապետության և պատմական Հայաստանի տարածքում: Միաժամանակ, վերն ասվածը վկայում է, որ հայ միջնադարյան գրավոր աղբյուրները իրականում բովանդակում են ավելի հարուստ փաստական հիմք, քան կարելի է կարծել և արժանի են ընագրագիտական ավելի խոր քննության:

АВАРАЙРСКОЕ СРАЖЕНИЕ
(Историко-критический обзор)

АЙК АКОПЯН

Р е з ю м е

Аварайрское сражение – одна из судьбоносных страниц в истории армянского народа. Оно привлекало внимание многих исследователей, и вокруг со-

66 Ե ղ ի շ ե, VI: Տե՛ս նաև Հ. Պ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 68:

бытии 451 г. сложилась историография, затронувшая многие аспекты локализации Аварайра, причин, хода и последствий сражения, количества и типов войск, принявших участие с обеих сторон. Результат исследований получил официальное оформление во всех учебниках, академическом и справочных изданиях Истории армянского народа (т. II, Ереван, 1984). Анализ письменных источников, прежде всего трудов раннесредневековых авторов Егишэ и Лазаря Парбеци, показывает уязвимость их основных положений, непричастность к современным им реалиям военного характера. Именно эти данные послужили основой для исторических реконструкций нового и новейшего времен. По сути, несостоятельны выводы о видах и количестве войск (66 тыс. с армянской и от 90 до 150 тыс. с персидской сторон), тактических методах ведения боя. Нуждается в качественном переосмыслении стратегия армии Вардана Мамиконяна. В настоящем намечаются два пути целенаправленного изучения проблематики: а) археологические разыскания на наиболее вероятных пунктах, приуроченных к Аварайрскому полю и б) углубленный анализ письменных источников, тактических и стратегических особенностей позднеантичных и раннесредневековых армий. Именно результаты последнего легли в основу данной статьи, в которой пересматривается принятая система данных об Аварайре. В статье освещаются структура, тактика, стратегия, количество армянских войск.

THE AVARAYR BATTLE
(Historical-critical review)

HAYK HAKOBYAN

S u m m a r y

The Avarayr battle is a crucial point of the Armenian history. Events of the 451 AD studied some generations of scholars and their conclusions based mainly on Early Medieval authors as Yeghisheh and Lazar Parpetsi. This article exposes the vulnerable features of traditional view as well as uncovers the most essential shortcomings on general course of the armed conflict. The analysis of the written sources combined with the main principles of art of the war shed a light on the quantity, structure of the armies, character of the military troops. The general elements of tactics and grand strategy of the Armenian forces are revealed in innermost layers of the old historical works scattered here and there, compared with Greek-Roman and Byzantine principles and military framework.